ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

Arbeiderpartiet

sp·a
sociaal progressief alternatief

PSOE



№ 7 (1598) ՅՈՒԼԻՍ 2008

Հաղորդագրություն

Յուլիսի 18-20-ը Վանաձորում տեղի ունեցաւ ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան 14-րդ Գերագոյն ժողովը: Ժողովը քննարկեց շրջանաւարտ Գերագոյն մարմնի գործունէութիւնը, հաստատեց առաջիկայ շրջանում քաղաքական, քարոզչական եւ կազմակերպական ոլորտներում իրականացուելիք ծրագրերը:

Անդրադառնալով քաղաքական խնդիրներին՝ ժողովը նոր ձեւաւորուած կոալիցիային ՀՅ Դաշնակցութեան մաս կազմելու որոշումը գտաւ արդարացուած:

Միաժամանակ արձանագրուեց, որ այդ մասնակցութիւնը պայմանաւորուած է հանրապետութիւնում քաղաքական համակարգի բարեփոխման, ժողովրդավարութեան յետագայ խորացման, հակակոռուպցիոն պայքարի ու տնտեսական մեծ նաշնորհների վերացման, ինչպէս նաեւ սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման ուղղութեամբ ակնկալուող կոնկրէտ արդիւնքներով:

Ժողովը վերահաստատեց կուսակցութեան վճռականութիւնը Արցախի հիմնախնդրի հայանպաստ, արդարացի լուծման գործում:

Քննելով 2008 թ. մարտի 1-2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձութիւնների եւ դրանց պատճառների ուսումնասիրութեան Ա՛ժ ժամանակաւոր յանձնաժողովի գործունէութիւնը՝ Գերագոյն ժողովը շեշտեց, որ այդ յանձնաժողովը պէտք է հետապնդի տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնների ամբողջական բացայայտումը եւ կարողանայ արդարացնել ու բաւարարել հանրութեան սպասելիքները:

Արձանագրուեց, որ կուսակցութիւնն այսուհետ եւս պէտք է ձգտի նպաստել ներհասարակական մթնոլորտի առողջացմանը եւ քաղաքական ուժերի միջեւ կառուցողական երկխօսութեան կայացմանը:

Անդրադառնալով արտաքին քաղաքական խնդիրներին՝ մէկ անգամ եւս ամրագրուեց, որ անընդունելի են հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատման՝ Թուրքիայի նախապայմանները, իսկ Ցեղասպանութեան փաստը չպէտք է դառնայ քննարկումների եւ սակարկութիւնների առարկայ:

Կազմակերպական օրակարգի շրջանակում Գերագոյն ժողովը առաջիկայ տարիները հռչակեց կազմակերպութեան ամրապնդման ու նոր ուժերով համալրման շրջան:

Գերագոյն ժողովի աւարտին ընտրուեց նոր Գերագոյն մարմին՝ հետեւեալ կազմով.

1. Արմէն Ռուստամեան
2. Արտիւշ Շահբազեան
3. Գագիկ Գէորգեան
4. Թաթուլ Յարութիւնեան
5. Իգոր Սարգսեան
6. Հայրապետ Բաբայեան
7. Հրաչ Թադեւոսեան
8. Հրայր Կարապետեան
9. Միքայէլ Մանուկեան
10. Մուշեղ Մանասեան
11. Ռոմիկ Մանուկեան
12. Ռուբեն Մարգարեան
13. Սիմոն Սիմոնեան
14. Վարդգէս Աթոյեան
15. Վլադ Քոչունց

Նորընտիր Գերագոյն մարմինն իր առաջին նիստում Գերագոյն մարմնի ներկայացուցիչ ընտրեց Արմէն Ռուստամեանին:

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

Մենք

4 *ՀՅԴ տեսակետները անմիջական խնդիրների շուրջ*

9 *Մեկ հարց Արմեն Ռուստամյանին*

Երկրի կյանքը

10 *Ք վոտաներ կանանց համար*
Անհրաժե՞շտ են արդյոք դրանք

Հայ Դատ

18 *Հայոց ցեղասպանությունը եւ մեր ժամանակը*

Միջազգային

23 *ԱՄՆ. ռազմական հետախուզության բարեփոխումները 21 - րդ դարում*

Դաշնակցական թեմ

35 *ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները եւ որոշ համեմատություններ Սոցիալներնի անդամ այլ կուսակցությունների արժեքային հասկացությունների հետ*

38 *Խանասորի արշավանքը եւ հայ երիտասարդության ազգային դաստիարակությունը*

Թերթիս «Դրօշակ» - ի էջերը

44 *Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ*

Նոր գիրք

47 *Բառագիտություն եւ օտարաբանություն*

Դարիերտարան

48 *Ռուբեն Գաբրիելյան*



“Դրօշակ” ամենամսյա պաշտոնաթերթ Հայ Հեղափոխական Դաշնակցության:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

“ Droshak” monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ԱԶԱՏԻՆ

ԱՔՍԻՈՄԸ...

Հայոց ցեղասպանության վիճարկման հարցը երբեւէ քննարկման առարկա չի դարձրել հայ պետական միտքը՝ ոչ անկախ Հայաստանի Հանրապետության, ոչ էլ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ողջ երկայնքով: Վերանկախացման շրջանում միայն, որոշակիորեն՝ 1995 թ., ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե Ցեղասպանության հարցով այլեւս պիտի զբաղվեն պատմաբանները: Այսպիսով Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ, փաստորեն, ձեւավորվեց պետական մտքի երկու երանգ՝ ազգայինը եւ ապազգայինը: Վերջինս հիմնավորվում էր նաեւ ռեալ քաղաքականությամբ, օգտապաշտությամբ, եւ ԼՏՊ-ն առիթը չէր կորցնում մյուս մոտեցումը թերարժեւորելու եւ վարկաբեկելու:

Փաստը, սակայն, այն է, որ ԼՏՊ-ի որդեգրած ապազգային մոտեցումը ոչ մի դրական ձեռքբերում չունեցավ մեր արտաքին քաղաքականության մեջ եւ միայն լայն ուշադրության առարկա դարձավ Թուրքիայի «փալիսի մեյքեր»-ների համար: Թուրքերը վարպետորեն հոկեցին խնդիրը «պատմաբաններին թողնելու» ՀՀՇ-ական մոտեցումը եւ աստիճանաբար իրենց հակահայ քաղաքականության գլխավոր հնարքը դարձրեցին:

Անհրաժեշտ համարեցինք այս նախերգանքը հնչեցնել, ասելու համար, որ այսօր Հայոց ցեղասպանության նկատմամբ ազգային եւ ապազգային մոտեցումների կիրառումը, ցավոք, քաղաքական կարեւոր չափորոշչի է վերածվել Հայաստանի ներքաղաքական ժխորում: Ով ուզում է ավելի օգտապաշտ դրսեւորվել, արժանանալ գերտերական ուժերի ուշադրությանը ու չեզոքացնել հակառակորդին, նա ապազգային ակորդն է սկսում նվագել: Իսկ ով ինքն է եղել ապազգային մոտեցման բուն կրողը, հիմա սկսել է ամբոխավարական խաղեր տալ ազգային գծի շուրջ եւ այդ խաղերը ծառայեցնել զուտ քաղաքական մարտավարությանը:

Այս ցավալի իրականությանը ի տես, ամրագրենք նախ այն, որ Հայոց ցեղասպանության հարցը մարտավարական հնարք չէ, ոչ էլ ուղերձ, ոչ էլ քաղաքական հեզաճկունության չափանիշ:

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ռազմավարական կարեւոր նշանակություն ունի Հայության եւ Հայաստանի համար: Ճանաչումը ոչ միայն մեր ազգային դատի արդար լուծմանը եւ ոտնահարված իրավունքների վերա-

կանգնմանն ուղղված քայլ է, այլեւ, այս հանգրվանում, Անկախ Հայաստանի պետականության ամրապնդմանը եւ Արցախյան հիմնահարցի հայանպաստ լուծմանը խթանող համազգային շարժում:

Թուրքիան, շրջափակման ենթարկելով Հայաստանը եւ ապա տեղեկատվական աննախադեպ արշավ սանձազերծելով, փորձում է բանակցային գործընթացներում խեղճացնել Հայաստանի դիվանագիտությունը եւ այդ ճամփով ոչ միայն մեզ պարտադրել ընդունելու Արցախյան հարցի ոչ հայանպաստ լուծման տարբերակներ, այլեւ «հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի» պարտադրանքով, հետածգել, այնուհետեւ նաեւ չեզոքացնել Ցեղասպանության ճանաչմանը միտվող հարցի արծարծմանը:

Ռազմավարական այս շարժման մեջ, քանի դեռ դիվանագիտական պատերազմը երկուստեք շարունակվում է նույն թափով, մեր մարտավարական դիրքերում ամենափոքր տեղաշարժը, եթե հատկապես դրանում «մեկ քայլ ետ, երկու քայլ առաջ»-ի նախանշանները չկան, միանշանակ, մեզ հանգեցնելու է թուլացման:

Այս իմաստով ՀՀ նախագահի մոսկովյան վերջին հայտարարությունները, որոնք թեեւ մեղմվեցին, ճշգրտվեցին թե՛ իր, թե՛ իր խոսնակի կողմից, մենք գնահատում ենք որպես այդպիսիք, որոնք, ինչ խոսք, սխալ էին ու ըստ ամենայնի մտահոգող:

Հարցը միջազգային-դիվանագիտական հարթությունից պատմագիտական ոլորտ տեղափոխելու իրենց նկրտումով, թուրքերը փորձում են հրաշալի հնարավորություն ձեռք բերել իրականացնելու առնվազն երեք ռազմավարական նպատակ. նախ՝ քարոզչական հիստերիայով կասեցնել զանազան պետությունների օրենսդիր շրջանակներում Ցեղասպանությանն առընչվող բանաձեւերի քննարկումը, ապա՝ ՀՀ քաղաքացիների մոտ ստեղծել անվստահություն եւ հակակրանք սեփական իշխանությունների նկատմամբ, եւ, վերջապես՝ սեպ խրել ՀՀ արտաքին քաղաքականության ու սփյուռքի քաղաքական-լոբբիստական գործունեության միջեւ:

Ինչպես մեզ հայտնի է «հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով»-ի տխուր փորձից, մեր հարեւանի քաղաքական այդ կուրսում, ակներեւ են Թուրքիայի թշնամական մտադրությունները: Անշուշտ մենք կողմ ենք հայ եւ թուրք ժողովուրդների բարիդրացիության մթնոլորտի ստեղծմանը, սակայն սկզբունքորեն չենք հավատում, որ այդ մթնոլորտի ձեւավորման ճշմարիտ ուղին անցնում է «հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի» ընդմիջից:

Ավելացնենք նաեւ, որ ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի օրին տված պատասխանի նկատմամբ թուրքերը հետեւողականորեն շարունակում են լռել եւ ձեւացնել, թե ոչ մի պատասխան դեռ չեն ստացել: Մեր համոզմամբ, անտեսման այս կեցվածքի հետեւում լուրջ հաշվարկներ են թաքնված:

Ընդգծենք եւս մի նշանակալից հանգամանք. դեռ «ոչ մի բան չեղած»՝ թուրքերն անմիջապես սկսում են իրենց «Սեւրի սինդրոմ»-ով հունից դուրս գալ եւ հապճեպ առաջ են մղում Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման հարցը: Այստեղից երեւում է նրանց՝ «հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի» կուրսի զուտ մարտավարական նշանակությունը, ինչն էլ, ինչպես նշվեց, երկու հարեւանների փոխհարաբերությունների բարելավման համար վստահություն չի կարող ներշնչել:

Հայոց ցեղասպանության իրողությունը վիճարկելի չէ: Հետեւաբար ոչ մի հայ, առավել եւս պետական պատասխանատու դեմք, իրավունք չունի ուղղակի կամ անուղղակի մասնակցել որեւէ գործընթացի, որի նպատակն է Հայոց ցեղասպանության՝ այդ պարզ ու մեկին ճշմարտության վիճարկումը:

Սա ազգային աքսիոմ է:

ՀՅԴ տեսակետերը ԱՆՄԻՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Դրօշակի» գլխավոր առաքելություններից է Դաշնակցության ժողովների ու մարմինների առած որոշումները լայն բացատրության եւ բաց քննարկման ճամփով հանրամատչելի դարձնելը: Այս իմաստով մենք կանոնավոր կերպով եւ մի շարք համարներում, հոդվածաշարերով անդրադառնալու ենք ՀՅԴ 30-րդ Ընդհանուր ժողովի որոշումներին: Այս շարանին պատկանող առաջին հոդվածով կներկայացնենք ՀՅԴ նորընտիր Բյուրոյի երեք ընկերների՝ Հայաստանին ու Հայությանը հուզող ներքին եւ արտաքին քաղաքականության մարտահրավերների հետ կապված տեսակետները, որ արծարծվել են առանձին հեռուստազրույցներում:

Ինչպե՞ս է գնահատվում ՀՀ գործադիր իշխանության կոալիցիոն կառավարության ցայժմ ունեցած (հարյուրօրյա) գործունեությունը դաշնակցական քաղաքական մտքի կողմից:

Ընկ. Հրանտ Մարգարյան. *«Սա բնական պայմանների 100 օր չի եղել: Դժվար իրավիճակի 100 օր է եղել: Մենք շատ ծանր սկիզբ ենք ունեցել այդ 100 օրվա համար եւ, բնականաբար, այն իր ազդեցությունն է թողել ամբողջ ընթացքի վրա: Այն նաեւ իր ազդեցու- թյունն է թողել մեր գնահատականի վրա, այսինքն՝ լավը անհրաժեշտ չափով չի գնահատվել, որովհետեւ ծանրացած մի բան կա մթնոլորտում: Վատը նույնպես այդ քաղաքական մթնոլորտի գնահատանքին է արժանացել, այսինքն քաղաքական մթնոլորտը ծանրացել է այնքան, որ նույնիսկ բացասականը հստակությամբ արժեվորել հնարավոր չի եղել: Բայց մի բան հաստատ կարելի է ասել, որ այս 100 օրվա ընթացքում նոր հույսի դուռ է բացվել: Հնարավոր է, որ մենք կարողանանք թե՛ կադրային իմաստով, թե՛ երկրից անարդարությունները վերացնելու իմաստով եւ թե՛ սոցիալական հարցերը լուծելու առումով՝ նոր ժամանակաշրջանի սկիզբ դնել: Այդ հույսի նախանշանները, կարծում եմ, կան: Վերջնական եզրակացության գալու համար գուցե բավարար չի, բայց այնքան է, որ դրականը երեւում է, եւ կա հույս, որ այն խորանա, ընդարձակվի, ամրանա»:*

Ընկ. Աղվան Վարդանյան. *«Պարտավոր ենք առավելագույնս աջակցել եւ հետամուտ լինել, որ այն ծրագրերը, բարեփոխումները, որոնք դրված են ներկա իշխանության, քաղաքական կոալիցիայի առաջնահերթությունների շարքում, որոնք ընդգրկված են կառավարության գործունեության ծրագրում, իրականացվեն արդյու-*

նավետորեն, եւ մեր հասարակությունը տեսնի դրա արդյունքները: Տեսնի եւ՛ երկրում ժողովրդավարությունը խորացնելու իմաստով, եւ՛ սոցիալ-տնտեսական հարցերը քայլ առ քայլ լուծելու իմաստով, եւ՛ վըստահության մթնոլորտը իշխանության հանդեպ բարձրացնելու իմաստով: Գաղտնիք չէ՝ այսօր մենք խնդիրներ ունենք այս առումով: Իմ կարծիքով, պրոբլեմների մի զգալի մասի աղբյուրը, հիմքը, արմատական ընդդիմության ոչ համարժեք մոտեցումները եւ գործողություններն են: Եվ ես խորապես համոզված եմ, որ այն քաղաքական ուժերը, որոնք այսօր իշխանություն են ձեւավորում, պատրաստ են եւ ունեն կամք, վճռականություն նաեւ այս հարցերը լուծելու եւ երկիրը իսկապես դուրս բերելու զարգացման որակապես նոր փուլ, նոր մայրուղի»:

Ընկ. Վահան Հովհաննիսյան. «Բավարար կամ ոչ բավարար, դանդաղ կամ արագ, ժամանակը ցույց կտա: Արդյունքները մինչեւ տարեվերջ պիտի երեւան»:

Ինչպե՞ս է գնահատվում Հայաստանի ներքաղաքական դաշտը:

Վահան Հովհաննիսյան

Ընկ. Վահան Հովհաննիսյան. «Մենք ունենք մեծ, բավականին ստվար, դժգոհ ժողովրդի մի զանգված: Ժողովրդի կեսն իր դժգոհությունն արտահայտեց ընտրությունների ժամանակ: Սակայն պետք է իմաստուն լինել եւ դժգոհներին բաժանել երկու անհավասար խմբի. օբյեկտիվ դժգոհների, որոնք արդարացիորեն դժգոհում են իրենց սոցիալական վիճակից, աշխատավարձից, ոստիկանի պահվածքից, դատավորի անարդար վերաբերմունքից, իրենց ճնշող մթնոլորտից: Հասկանալի է, որ նրանք դժգոհ լինելու իրավունքն ունեն, հետեւաբար նրանց դժգոհությունն օբյեկտիվ է: Այդ մասին խոսում է նախագահը, այդ մասին խոսում է վարչապետը, այդ ուղղությամբ կառավարությունն այսօր աշխատանք է տանում: ... Ընդդիմության մեջ, բոլորին նույն կաթսայի մեջ պետք չի տեսնել, իհարկե, բայց ռադիկալ ընդդիմության մեջ կան մարդիկ, ովքեր ուղղորդվում են՝ որքան վատ, այնքան լավ սկզբունքով: Եվ բնական է, որ պիտի փորձեն դրդել իշխանությանը սխալ քայլերի, անհամ վիճակների մատնել: Այսինքն չափից դուրս ագրեսիվություն դրսեւորել, որպեսզի համարժեք պատասխանը իշխանությունից ստանալով, հնարավորություն ստանան էլ ավելի զարգացնել լաչառությունը: Որովհետեւ նույն միջազգային ատյանները, քաղաքագետները, պարզ քաղաքացին այս հակադրության մեջ տրամադրված չէ զոհի դերում տեսնել իշխանությանը»:

Ինչպե՞ս է գնահատվում իշխանության եւ արմատական ընդդիմության միջեւ հնարավոր երկխոսության հարցը:

Ընկ. Հրանտ Մարգարյան. «Երկխոսությունը միշտ է անհրաժեշտ: Այսինքն՝ ներազգային համերաշխությունը, ազգային միասնականությունը միշտ էլ անհրաժեշտ են՝ անկախ նրանից, թե ով է իշխանության մեջ, ով՝ իշխանությունից դուրս: Անկախ այն բանից, թե ներազգային առումով ինչ խնդիրներ գոյություն ունեն: Ազգային միասնականութ-

յունը ինքնանպատակ չէ: Ինչ-որ նպատակների շուրջ ազգային միասնականությունը անհրաժեշտություն է: Այն հիմնականում տեղի է ունենում ազգի հիմնական օրակարգերի շուրջ»:

Ընկ. Աղվան Վարդանյան. *«...Այդ բանաձեւերը* (խոսքը ԵԽԽՎ-ի երկու՝ **1609** եւ **1620** բանաձեւերի մասին է,- խմբ.) *վերաբերում են ե՛ւ իշխանությանը, ե՛ւ ընդդիմությանը: Այնպես չէ, որ արմատական ընդդիմությունը անելիք չունի: Բայց նրանք հրաժարվում են մասնակցել, եւ վստահ եմ, եթե իր մասով իշխանությունը բոլոր պարտավորությունները կատարի, էլի ընդդիմությունը ասելու է՝ ոչինչ չի արված: Օրինակ, բանաձեւերն ասում են, որ ընդդիմությունը պետք է ճանաչի նախագահական ընտրությունների արդյունքները, սահմանադրական դատարանի որոշումը, պետք է ճանաչի, ընդունի իշխանությունը, այնուհետեւ, եթե ուզում է, կարող է բողոքարկել նաեւ իրեն հասանելի այլ ատյաններում: Մենք ունենք ընտրված նախագահ, մեր ընտրություններն ամեն անգամ ավելի լավ են անցկացվում, եւ վստահ եմ, որ հաջորդ անգամ էլ ավելի լավ կանցկացվեն: Մենք ունենք ընտրված խորհրդարան, որը ներկայացնում է ժողովրդի կամքը: Ես չեմ կարծում, որ ընդդիմությունը կարող է ասել, թե ինքը ներկայացնում է ժողովրդի կամքը: Ընդդիմությունը ներկայացնում է իր ընտրողների կամքը, եւ ես հարգում եմ դա: Ես հարգում եմ նաեւ այն, որ ընդդիմությունը ներկայացված է խորհրդարանում, եւ ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է կառավարությունում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է տեղական ինքնակառավարման մարմիններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է ԶԼՄ-ներում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է հասարակական կազմակերպություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է կրոնական կազմակերպություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է արհեստակցական միություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է կուսակցություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է ընտանիքներում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է համայնքներում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է ազգային փոքրամասնություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է կրոնական փոքրամասնություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է սեռական փոքրամասնություններում: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է տարեցների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է երիտասարդների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է կանանց մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է տղամարդկանց մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է հաշմանդամների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է անօթևանների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է գաղթականների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է փախստականների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է ներքին տեղահանվածների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է ներգաղթյալների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է արտագաղթյալների մեջ: Ես հարգում եմ այն, որ ընդդիմությունը ներկայացված է վերադարձող

Ընկ. Աղվան Վարդանյան. «Հաջորդ մարտահրավերը, որ, կարծես, վերջին շրջանում դուրս է հասարակության ուշադրությունից, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն է, Ադրբեջանի կարծրացող դիրքորոշումը եւ բանակցային զարգացումները»:

ՀՅԴ-ն ի՞նչ մոտեցում ունի հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ:

Ընկ. Վահան Հովհաննիսյան. «Մենք Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելուն դեմ չենք, սակայն մենք համարում ենք, որ Ցեղասպանության լինելու կամ չլինելու փաստի քննարկումը չէ, որ դրա հիմքում պիտի լինի, որովհետեւ Ցեղասպանության փաստը ընդունված է, ոչ միայն մեր կողմից, այլ նաեւ ամբողջ աշխարհի, օրինակ՝ ԱՄՆ-ի ժողովրդի»:

Ընկ. Աղվան Վարդանյան. «Թուրքիան է նախապայմաններով խոսում Հայաստանի հետ: Բնականաբար, նախապայմաններն ընդունելի չեն կարող լինել: Եվ ես չեմ պատկերացնում, թե հարեւան երկրի սահմանը փակած, դիվանագիտական հարաբերություններ չհաստատած, Ղարաբաղի հարցում ակնհայտ կողմնակալ, Եվրոխորհրդի անդամ ու դեռ Եվրոմիությանը ձգտող Թուրքիայի ղեկավարը ինչպես կարող է որոշում կայացնել ու գալ Հայաստան ֆուտբոլ դիտելու»:

Աղվան Վարդանյան.

Ի՞նչ է ՀՅԴ տեսակետը ՀՀ նախագահի մոսկովյան հայտարարությունների մասին:

Ընկ. Աղվան Վարդանյան. «Հանրապետության նախագահի հայտարարությունները Մոսկվայում երկու (Մոսկվայի հայ համայնքի եւ հայտնի քաղաքագետների հետ) հանդիպումների ժամանակ, այնուհետեւ մամլո քարտուղարի պարզաբանումները, արտաքին գործերի նախարարի հաստատումը մեր արտաքին քաղաքական օրակարգի վերաբերյալ եւ մեր քննարկումները ՀՀ նախագահի հետ մեզ բերել են այն համոզման, որ ՀՀ նախագահը Հայոց ցեղասպանությունը քննելի, վիճարկելի, ուսումնասիրելի հարց չի համարում: ՀՅԴ Բյուրոն իր մամլո հաղորդագրության մեջ հաստատեց, որ ընդհանրապես Ցեղասպանության փաստը Դաշնակցության համար, ինչպես նաեւ, վստահ ենք, մեր ժողովրդի 99 տոկոսի համար՝ վիճարկելի խնդիր չէ: Մենք հաստատում ենք, որ Հայաստանը ներկայացնող որեւէ բարձրաստիճան պաշտոնյա բացառվում է, որ այլ մոտեցում ունենա: Ցեղասպանության հարցը միայն անցյալին չի վերաբերում, Ցեղասպանության հարցը առնչվում է մեր պետության, մեր ժողովրդի եւ՛ գոյությանը, եւ՛ անվտանգությանը, եւ՛ մեր ապագային: Այն, ինչ կատարվել է անցյալում, դարձել է ապագայի խնդիր: Այն ապագայում հայ ժողովրդի լիարժեք ինքնադրսեւորման եւ պետականության անվտանգության հարցերին է առնչվում: Այս առումով, կարծում ենք, խնդիր չկա: Նաեւ այս հարցերը որոշակի դինամիզմ պիտի ունենան»:

Ընկ. Հրանտ Մարգարյան. «Մենք չենք լռել, ուղղակի չենք աղմկել: Սրանք տարբեր բաներ են: Չենք աղմ-

կել, որովհետեւ դրա անհրաժեշտությունը չենք զգացել: Լսել եմ որոշ մեկնաբանություններ, որոշ վերլուծություններ, որոնք անարդար են եւ հեռու մեր մոտեցումներից: Այդ տեսակ պիտակները մեզ չեն կարող ստվերել: Եվ ասեմ անիմաստ գործ են անում նրանք, ովքեր փորձում են պիտակավորել Դաշնակցությանը: Խնդիրն այն է, որ մենք, առաջին իսկ պահից, մեծ ցնցում ապրեցինք, բայց մենք կոալիցիոն համաձայնություն ունեինք եւ մեզ վայել չէր լինի, եթե մենք նախքան մեր հարցերը խոհանոցում քննելը՝ հրապարակային քննության նյութ դարձնեինք: Առաջին իսկ վայրկյանից մենք մեր մտահոգությունը հայտնեցինք եւ փորձ արեցինք ներքին խոհանոցում ճշտել հարցի հանգամանքները: Եվ այդ քննարկման ընթացքում մենք համոզվեցինք, որ էական վտանգ չկա, չկա այն վտանգը, որ արտաքին քաղաքական կուրսի մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Մենք համոզվեցինք, որ այդպիսի վտանգ գոյություն չունի՝ անշուշտ, փոխանցելով մեր մտահոգությունները, մեր կարծիքը, հասկացնելով, որ դա մեզ համար կարմիր գիծ է, եւ որ մենք դրանից չենք կարող անցնել»:

Ընկ. Վահան Հովհաննիսյան. *«Արտգործնախարարի մեկնաբանությունը, կարծում եմ, այս հարցում բավականին հստակեցումներ մտցրեց: Մեր տեսակետը վերաբերում է ոչ միայն նախագահին, ոչ միայն այսօրվա նախագահին կամ վաղվա նախագահներին, այլ ընդհանրապես, Հայաստանի մոտեցմանը: Փաստը դեռ 1915 թվականին եւ դրանից հետո էլ աշխարհի կողմից ընդունվել է, ուրեմն ինքը փաստը քննարկման առարկա չէ: Որեւէ ստեղծվելիք հանձնաժողով կարող է քննարկել, իհարկե, եւ պետք է նաեւ քննարկի Ցեղասպա- նության հետեւանքները, դրանից ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիները: Մեր հարաբերություն- ներում ընդհանրապես Ցեղասպանության հետ կապված՝ հատուցման, պատճառների մասին կարող է խոսք գնալ, բայց չի կարող քննարկվել՝ ցեղասպանություն եղե՞լ է թե ոչ: Կարծում եմ, որ պաշտոնատար անձանց պարզաբանումները այս առումով բավարար էին, եւ մենք գտնում ենք, որ սա էլ պետք է լինի ուղեգիծ»:*

ՀՅԴ-ն ի՞նչ կարծիք ունի տարածքային ամբողջականության ճանաչման նախապայմանի մասին:

Ընկ. Վահան Հովհաննիսյան. *«Նախ՝ միջազգային պրակտիկան բացարձակապես չի պահանջում, որ երկրների մեջ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեն, սահմանների ճանաչման նախապայմանով: Ճապոնիան չի ճանաչում Ռուսաստանի սահմանները, նրանց միջեւ պայմանագիր էլ չկա պատերազմից հետո, Ճապոնիան, նույնիսկ, տարածքային որոշակի պահանջներ ունի Ռուսաստանի նկատմամբ, սակայն նրանք ունեն դեսպաններ Տոկիոյում եւ Մոսկվայում, նորմալ առեւտուր կա, նավահանգիստները բաց են, ոչ ոք ճանապարհ չի փակել եւ չկա հակաճապոնական, հակառուսական հռետորիկա այդ երկրների մամուլի էջերում: Նույնը կարելի է ասել նաեւ ուրիշ երկրների պարագայում՝ Հարավային Ամերիկայում, Եվրոպայում անգամ, որտեղ սահմանային հարցը չի դարձել հարաբերություններ հաստատելու նախապայման: Մենք ասում ենք՝ եթե Թուրքիան համաձայն է մեզ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել, թող հաստատի, շատ լավ է, բայց նախապայմաններ չպետք է դնի, հատկապես սահմանները ճանաչելու նախապայմանը: ...Մեթյու Բրայզայի հայտարարությունների մեջ լսել եմ նման տեսակետ, բայց գիտեմ նաեւ, որ արեւմտյան որոշ շրջանակներում նման տեսակետներ կան: Պետք է հասկանալ. ի՞նչ կարող է այսօր Թուրքիան առաջարկել Հայաստանին. դիվանագիտական հարաբերություննե՞ր: Լավ է, բայց դրա գինը նման ծանրակշիռ հաստատումներ, ինչպես սահմանների ճանաչում եւ այլն, չեն կարող լինել»:*

Մեկ հարց ՀՅԴ Հայաստանի կազմակերպության Գերագույն մարմնի ներկայացուցիչ ընկ. Արմեն Ռուստամյանին

Ընկ. Արմեն, ՀՅԴ Հայաստանի կազմակերպության 14-րդ Գերագույն ժողովը առաջիկա տարիները հռչակել է ՀՅԴ Հայաստանի կառույցի ամրապնդման եւ նոր ուժերով համալրման շրջան: Թե կառույցի ամրապնդումը եւ թե նոր ուժերով համալրումը, որեւէ կուսակցության համար, ամենօրյա խնդիր է, եւ երբ նման շեշտադրում է լինում, բնականաբար, ծագում են տարընթերցումներ եւ ամենատարբեր մեկնաբանություններ: Իրականում ի՞նչ շարժառիթներ են մղել Գերագույն ժողովին՝ նման շեշտադրումով որոշում կայացնելու համար:

Կառույցի ամրապնդման և համակիր շրջանակների ընդլայնման շրջան

Սա նախ չի նշանակում, թե կա կառույցի թուլացման վտանգ, ինչպես դա փորձում են որոշ ուժեր ներկայացնել՝ իրենց համար ցանկալին իրականության փոխարեն մատուցելով: Այդպիսի մարդիկ պարզապես կամ անտեղյակ են Դաշնակցության ժողովներում պարբերաբար քննարկվող անհրաժեշտ հարցերի շրջանակից, կամ էլ շատ լավ գիտեն, բայց նպատակ ունեն անտեղյակ մարդկանց թյուրիմացության մեջ գցելու միջոցով կասկածանք սերմանել ՀՅԴ կազմակերպական ուժի նկատմամբ և այդ ֆոնի վրա տարածել սեփական մտքերն ու ծրագրերը:

Իրականությունը սակայն չափազանց պարզ է.

Նախ՝ բոլոր գերագույն ժողովները ավանդաբար քաղաքական և քարոզչական խնդիրների հետ միասին պարտադիր քննության են առնում նաև կազմակերպական հարցերը: Քանի որ Դաշնակցությունը իր առջև դրած ազգային, քաղաքական, քարոզչական խնդիրները լուծելիս հենվում է նախ և առաջ իր սեփական ուժերի վրա, իսկ այդ ուժի հիմնական աղբյուրը և շարժիչը կուսակցության կառույցն է և նրա համակիր շրջանակը: Նրա հետևողական ամրապնդումը և ընդլայնումը Գերագույն մարմնի ամենակարևոր խնդիրն է: Սա դինամիկ գործընթաց է և ենթադրում է տվյալ պայմաններում առաջացած կազմակերպական բնույթի թերությունների արձանագրում, նոր մարտահրավերների ճշտում և անելիքների ծրագրավորում: Եթե հաշվի առնենք, որ կուսակցությունը ընդամենը երկու տարվա ընթացքում ինքնուրույն մասնակցեց աննախադեպ ընտրական մարաթոնի, ապա դժվար չէ պատկերացնել, որ այսօրինակ խնդիրները իրենց ծավալներով էլ աննախադեպ էին և պետք է արժանանային ժողովի համապատասխան ուշադրությանը: Ուստի և վերոնշյալ կարգախոսը առավելագույնս ամփոփ կերպով արտահայտում է նորընտիր Գերագույն մարմնի գլխավոր անելիքը:

ՔՎՈՏԱՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԴՐԱՆՔ

Անահիտ Բաղդասարյան



«Հայաստանն այն պետություններից է, ուր կանանց համար քվոտաներ ամրագրված են Ընտրական օրենսգրքում եւ կուսակցական ցուցակներում: Սակայն ցավալիորեն պետք է նշել, որ քվոտաներ օգտագործած 96 պետությունների շարքում Հայաստանը գրավում է 88-րդ տեղը՝ Հասարակածային Գվինեայից հետո: Ապա գալիս են Շրի Լանկան, Հայիթին, Եգիպտոսը, Լիբանանը, Բանգլադեշը, Նիգերիան, Իրաքը, Աֆղանստանը եւ Սիերա Լեոնեն: Վերջին երեք պետություններում կին պատգամավոր ընդհանրապես չկա»:

Ֆեմինիստական գաղափարախոսությունը երբեք մուտք չգործեց հայկական իրականություն ոչ միայն նրա համար, որ օտար արժեքային համակարգի, հասարակական օտար իրավահարաբերությունների ծնունդ էր, այլ հիմնականում այն պատճառով, որ հայ կինը երբեք իրավազուրկ չի եղել եւ միշտ տղամարդկանց հետ հավասար կրել է երկրի եւ ժողովրդի հոգսը:

Նույնիսկ 19-րդ դարում եւ 20-րդ դարասկզբին, որոնք նշանավորվեցին կանանց իրավունքների պաշտպանության շարժման սկզբնավորմամբ, հայ կանանց շարժման կնքահայրը կանայք չէին, այլ տղամարդիկ: Դրանք հայ առաջադեմ մտավորականներն էին, որ հրապարակ հանելով կանանց հարցը, նրանց հետեւողականորեն մղեցին դեպի հասարակական կյանք, եւ 19-րդ դարի կեսերից արդեն հայ կինը հասարակական կյանքի կիզակետում էր՝ լծված հասարակական, լուսավորչական, բարեգործական եւ աղքատախնամ ժրաջան աշխատանքի (Ա. Հարությունյան, Երեւելի տիկնանց դարը, 2005 թ., էջ 20): Դա տղամարդկանց կողմից ոչ թե մեծահոգության դրսեւորում էր, այլ ավելին՝ երկրի եւ ժողովրդի ճակատագիրը կիսելու հրավեր: Ահա այստեղ է, որ կարեւոր հաստատում պետք է արվի. կանանց վերապահված պատասխանատվությունը բնականաբար հանգեցրեց նրանց իրավունքների ճանաչմանը: Եվ իզուր չէ, որ Հայկական Առաջին Հանրապետության տարիներին Հայաստանը աշխարհում երկրորդ պետությունն էր (Ֆինլանդիայից հետո), որ կանանց ընտրելու եւ ընտրվելու իրավունք տվեց եւ իր խորհրդարանում չորս կին պատգամավոր ուներ, դեռ ավելին, ուներ նաեւ արտակարգ եւ լիազոր մեկ կին դեսպան:

Խորհրդային ժամանակաշրջանում կանանց իրավունքների պաշտպանության նպատակով ներդրված էր քվոտաների համընդհանուր համակարգ: Դրանք գործում էին ինչպես ընտրովի, օրենսդիր եւ գործադիր մարմիններում, այնպես էլ արհմիություններում, ստեղծագործական եւ հասարակական կազմակերպություններում:

Սակայն ամբողջատիրական ռեժիմի ուժեղացումը թուլացրեց կանանց հավասարության հասկացությունը: Եվ չնայած կանանց համար նախատեսված հավասարության սկզբունքների իրավական մշակումներին, նրանց տրվող արտոնություններին եւ քվոտաներին, խորհրդային ամբողջատիրությունը նույնպես բոլոր կարեւոր, հիմնարար խնդիրների որոշումները թողեց տղամարդկանց:

Հետխորհրդային տարիներին, տնտեսական եւ քաղաքական ճգնաժամն ավելի սրեց կանանց վատթարացող վիճակը եւ ցրեց տղամարդկանց հետ իրավահավասարության մշուշը: Ավելի ու ավելի նեղացվեց կանանց ներգրավումը տարբեր բնագավառներ, եւ նրանք աստիճանաբար դուրս մղվեցին աշխատանքի բոլոր ոլորտներից:

Այսպես կոչված «զարգացող ժողովրդավարության» երկրների տնտեսական, երբեմն նաեւ պարբերաբար կրկնվող քաղաքական ճգնաժամերը էլ ավելի մեծացրեցին կանանց աղքատության ռիսկը, որը, ինչպես նաեւ գործազրկությունը, աճման հատուկ տեմպեր ունի հատկապես կանանց շրջանում:

Սակայն կրթական բարձր մակարդակը եւ սոցիալական բարձր գիտակցությունը կանանց թույլ չեն տալիս հարմարվել ստեղծված իրավիճակի հետ: Հաշվի առնելով քաղաքականության մեջ կանանց թվաքանակի աճի դանդաղ տեմպերը, արդեն երկար տարիներ այս հարցը կարգավորելու համար պայքարողները հանգել են այն եզրակացության, որ իրավիճակը շտկելու ժամանակավոր տարբերակ կարող է հանդիսանալ քվոտաների ներդրումը: Այսպիսի համակարգը կանանց համար որակական թռիչք է քաղաքականության մեջ իրենց ներկայությունը ապահովելու հարցում:

Միեւնույն ժամանակ չի կարելի չնկատել, որ քվոտաները հասարակության մեջ լուրջ հարցադրումների, երբեմն նաեւ լուրջ դժգոհությունների առիթ են դառնում:

Ուսումնասիրելով կանանց համար նախատեսված քվոտաների խնդիրը մեր երկրում, հարկ համարեցինք նյութի սկզբում ներկայացնել այդ գործընթացի միջազգային փորձը, որը շարունակության մեջ կփորձենք համադրել մեր իրականության հետ:

Քաղաքականության մեջ տղամարդկանց եւ կանանց հավասար ներկայության, քաղաքացիական հասարակության ձեւավորման եւ դինամիկ զարգացման գործում դրա կարեւորության վերաբերյալ միջազգային փորձը ներկայացնելիս, մենք օգտվել ենք Ստոկհոլմում գործող ժողովրդավարության եւ ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտի (International IDEA), ինչպես նաեւ Ստոկհոլմի համալսարանի քաղաքագիտության դոկտոր-պրոֆեսորներ Ջուլիա Բալինգտոնի, Դրուդե Դալերուպի, Հյուստոնի համալսարանի քաղաքագիտության դոցենտ Ռիչարդ Մ. Մերլանդի եւ ՌԴ գիտությունների ակադեմիային կից ԱՄՆ-ի եւ Կանադայի ինստիտուտի միջազգային փորձագետ, դոկտոր Նադեժդա Շվեդովայի ուսումնասիրություններից: Կներկայացնենք նաեւ աշխարհի 96 պետություններում ներդրված քվոտաների տեսակները եւ դրանց արդյունքները:

«Կանանց հավասար ներկայությունը որոշումների ընդունման մեջ պահանջում է ոչ միայն սովորական արդարությունը կամ ժողովրդավարությունը. դա անհրաժեշտ պայման է: Կանանց շահերը պետք է ուշադրության արժանանան»,- նշված է 1995 թվականին Պեկինում կայացած Կանանց միջազգային համաժողովում ընդունված գործողությունների պլատֆորմում: Հասարակական կյանքում տղամարդկանց եւ կանանց հավասար մասնակցությունը այն հիմնարար պայմաններից մեկն է, որն արտացոլված է նաեւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1979 թվականին ընդունված եւ 1981 թվականին ուժի մեջ մտած «Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» (CEDAW) կոնվենցիայում:

Սակայն նույնիսկ հիմա, ավելի քան 25 տարի անց, երբ այդ կոնվենցիան վավերացրել են 173 երկիր (Հայաստանն այն վավերացրել է 1993 թ.), կանայք շատ թույլ են ներկայացված աշխարհի բազմաթիվ երկրների քաղաքական կյանքում:

Ցանկացած ժողովրդավարական համակարգի կարեւոր սկզբունքը մարդու իրավունքներն են, այդ թվում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց քաղաքական իրավունքները: Այսօրվա դրությամբ ժողովրդավարության եւ գենդերային հավասարության համադրումը միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք է: Եվ քանի որ երիտասարդ ժողովրդավարություն ունեցող մեր երկիրը ձգտում է ինտեգրվել համաշխարհային գործընթացներին, ապա չի կարող հաշվի չառնել, որ ցանկացած քաղաքա-

կան ծրագիր, որն անտեսում է այս դրույթներն ու մոտեցումները, միջազգային հարաբերություններում այլեւս վստահություն չի ներշնչում: Գենդերային խնդիրների կարեւորման լավագույն օրինակը «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրն է, որի բոլոր բաժիններում հատուկ ուշադրություն է հատկացված գենդերային խնդիրներին:

Պառլամենտարիզմի միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրի օրենսդիր մարմնում կանանց թիվը պետք է առնվազն հասնի կրիտիկական նվազագույնի՝ 30-35 տոկոսի, որպեսզի նրանք կարողանան ազդեցություն ունենալ որոշումների կայացման, քաղաքական խաղի կանոնները փոխելու, քաղաքականությունն ավելի մարդասիրական դարձնելու վրա:



Հարցն ուսումնասիրող միջազգային փորձագետները գտնում են, որ բոլոր երկրների ընտրական համակարգերը բարեփոխման կարիք են զգում եւ այդ բարեփոխումների առաջնային խնդիրներից է կանանց եւ տղամարդկանց բալանսավորված ներկայությունը ինչպես ընտրովի, այնպես էլ գործադիր մարմիններում: Իսկ կանանց եւ տղամարդկանց համագործակցությունն ապահովելու միջեւ այժմ գտնված լավագույն միջոցը գենդերային քվոտաներն են: Խոսքն իհարկե մեր երկրում նախկինում ընդունված ծիծաղաշարժ 5 կամ վերջերս վերափոխված 15 տոկոսի մասին չէ:

Անշուշտ, ինչ վերաբերում է քաղաքականության մեջ կանանց մասնակցությանը քվոտաների միջոցով, ապա այստեղ նույնպես ամեն ինչ միանշանակ չէ: Քվոտան, ներկայումս թեեւ անհրաժեշտ, սակայն ժամանակավոր միջոց է, որը տվյալ փուլում նպաստում է կանանց քաղաքական ակտիվության բարձրացմանը: Այլապես անբնական է, որ հասարակության կեսից ավելին կազմող կանայք չեն մասնակցում երկրի, հասարակության եւ հենց իրենց վերաբերող որոշումների կայացմանը, դրանց կատարման վերահսկողությանը: Իհարկե, հասարակության սոցիալական հասունացմանը զուգահեռ քվոտաները բնականաբար կվերանան, սակայն սա երկար ու դժվարություններով լի ճանապարհ է: Իսկ սոցիալական հասունացումը ենթադրում է եւ կենսամակարդակի, եւ գիտակցության, եւ քաղաքական մշակույթի զարգացածության որոշակի աստիճան:

Ի՞նչ բան է քվոտան: Որոնք են այդ երեւույթի «քեր» եւ «դեմ» կողմերը:

Քվոտայի գաղափարը հասարակության կեսից ավելին ներկայացնող կանանց քաղաքական պաշտոններում ընդգրկելն է, ինչպես նաեւ՝ որպեսզի կանայք քաղաքական կյանքում չմեկուսացվեն եւ եզակի երեւույթ չդառնան: Կանանց համար քվոտաները ենթադրում են, որ նրանք որոշակի թիվ կամ տոկոս պետք է կազմեն որեւէ մարմնի, թեկնածուական ցուցակների, խորհրդարանի կամ կառավարության կազմում: Անշուշտ, գենդերային քաղաքականությունը ենթադրում է, որ քվոտաներ կարող են կիրառվել նաեւ տղամարդկանց համար, եթե դրա կարիքը կա:

Երկարատեւ ու խոր ուսումնասիրությունների արդյունքում Ստոկհոլմի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Դրուդե Դալերուպը ամբողջացրել է քվոտաների ներդրման «կողմ» եւ «դեմ» մոտեցումները:

Քվոտաների ներդրման կողմնակիցները գտնում են.

ա) կանանց համար նախատեսված քվոտաները ոչ թե խտրականության, այլ գոյություն ունեցող իրական արգելքների հաղթահարման ճանապարհ են,

բ) քվոտաները ենթադրում են, որ ընտրովի կամ նշանակովի մարմիններում կանանց որոշակի թվով ներկայությունը փոքրացնում է ճնշումը նրանց վրա,

գ) կանայք, որպես քաղաքացի, նույնպես իրավունք ունեն հավասար ներկայացուցչության,

դ) կանանց փորձը անհրաժեշտ է քաղաքական կյանքում,

ե) կանայք նույնքան կրթված եւ զարգացած են, որքան տղամարդիկ, սակայն նրանց որակավորումը նվազեցվում է քաղաքական համակարգում, որտեղ գերակայում են տղամարդիկ,

զ) քաղաքական կուսակցություններն են վերահսկում թեկնածուների առաջադրումը, այլ ոչ թե անմիջապես ընտրողը, ով էլ որ պետք է որոշի, թե ում է ընտրում:

Իսկ քվոտաների կիրառման հակառակորդները պնդում են.

ա) քվոտաները հակասում են բոլորի համար հավասար հնարավորության սկզբունքին, քանի որ կանանց առավելություն է տրվում,

բ) քվոտաները հակաժողովրդավարական են, քանի որ ընտրողները պետք է որոշեն ում ընտրել,

գ) քվոտաները ենթադրում են, որ քաղաքական գործիչ են ընտրվում իրենց սեռի շնորհիվ, այլ ոչ թե բարձր որակավորման,

դ) շատ կանայք չեն ուզում ընտրվել պարզապես նրա համար, որ իրենք կին են:

Անհրաժեշտ է նշել, որ հաճախ վեճերը գնում են բացառապես քվոտաների ներդրման շուրջ, այլ ոչ իրացման, սակայն դա էլ որեւէ նշանակություն չի կարող ունենալ, քանի դեռ չկան դրանց իրականացման մեխանիզմներ: Իրենց կողքին կանանց քաղաքական ներկայությունը մի կերպ «հանդուրժող» տղամարդկանց քաղաքական վերնախավը կանանց իրավունքները սահմանափակող արգելանքների վերացումը համարում է բավարար պայման, իսկ մնացած ամեն ինչը կախված է կանանց ակտիվությունից, սակայն այստեղ չպետք է մոռանալ, որ խաղի կանոնները նույնպես ստեղծվում եւ ամրագրվում են հենց տղամարդկանց կողմից: Կանայք շատ մեծ դժվարությամբ են տեղ գտնում տղամարդկային նորմերին եւ արժեքներին, տղամարդկային կենսակերպին համահունչ քաղաքական մոդելում:

«Քվոտաները երկու ծայր ունեցող փայտի են նման,- նշում է Իսպանիայի խորհրդարանի պատգամավոր Անա Բալետբոն,- մի կողմից քվոտաները տղամարդկանց ստիպում են մտածել որոշումների կայացման մեջ կանանց ընդգրկելու մասին, մյուս կողմից հենց իրենք պետք է տեղեր զիջեն կանանց համար: Բայց քանի որ տղամարդիկ են այդ տեղերը զիջում, բնականաբար նրանք կփնտրեն այնպիսիներին, որոնք հեշտորեն են համակերպվում տղամարդկանց գերակայության հետ»:

Նույն հարցի վերաբերյալ Շվեդիայի խորհրդարանի նախկին խոսնակ Բրիգիտա Դալը պնդում է. «Կանանց ներկայության հիմնախնդիրը չի կարելի լուծել, օգտագործելով միայն քվոտաների համակարգը: Քաղաքական կուսակցությունները, կրթական համակարգը, հասարակական կազմակերպությունները, միությունները, ողջ հասարակությունը պետք է ստանձնեն կանանց՝ ներքեւից վերեւ առաջխաղացման պատասխանատվությունը: Սակայն դրա համար ժամանակ է պետք: Դա տեղի չի ունենա վաղը կամ մյուս օրը, մեկ կամ հինգ տարի հետո: Երկու սերունդ կպահանջվի, որպեսզի փոփոխությունները շոշափելի դառնան: Ահա թե ինչի վրա ենք աշխատում Շվեդիայում: Մենք քվոտաների համակարգից չենք սկսել: Սկզբում հիմքեր ստեղծեցինք հեշտացնելու կանանց քաղաքականության մեջ ներգրավումը: Նախապատրաստեցինք նաեւ համակարգ, որտեղ տղամարդիկ իրենց շատ ճնշված չզգան: Այնուհետեւ, որպես միջոց օգտագործեցինք քվոտաներ այն բնագավառներում, որտեղ անհրաժեշտ էր ճեղքում առաջացնել»:

Այսօր քաղաքակիրթ բոլոր երկրներում, պետական ռազմավարական ծրագրերը մշակելիս, հաշվի է առն-

վում գենդերային հավասարակշռության գործոնը: Դա վերաբերում է բոլոր ոլորտներին առանց բացառության: Սա նշանակում է՝ տղամարդկանց եւ կանանց գոյություն ունեցող մտավոր ներուժը հիմնավորված եւ մանրակրկիտ ձեվով օգտագործել երկրի զարգացման բոլոր բնագավառներում:

Ղեկավարման ներկայիս բարդ համակարգում, երբ ծրագրվում եւ մոդելավորվում է ամեն ինչ՝ տնտեսությունից մինչեւ քաղաքական ղեկավարության ձեւը, սա նոր մոտեցում է: Այսպիսի քաղաքականության նպատակն է առավելագույնս հաշվի առնելով կնոջ եւ տղամարդու առանձնահատկություններն ու տարբերությունները, արդյունավետ եւ ըստ նպատակահարմարության օգտագործել նրանց կարողությունները երկրի հասարակական եւ տնտեսական զարգացման համար, քանզի այդ տարբերությունները եւ առանձնահատկությունները լրացնում են միմյանց, ձեւավորելով մեկ ամբողջություն:

Կանայք, չսպասելով միայն տղամարդկանց բարյացակամությանը, ուղղակի պարտադրված են իրենք կազմակերպել եւ մոբիլիզացնել սեփական ուժերն ու հնարավորությունները, իրենց ձգտումների եւ հետաքրքրությունների մասին տեղեկացնելով ինչպես կանանց, այնպես էլ այլ կազմակերպությունների, ապացուցել, որ իրենք կարող եւ արժանի են մասնակցելու երկրի եւ ժողովրդի համար որոշումների կայացմանը, եւ նոր միայն իրավասու մարմիններից պահանջել՝ օրենսդիր եւ գործադիր մարմիններում ստեղծել կանանց ներկայացուցչության ապահովման մեխանիզմներ:

Այս ճանապարհով են գնացել Հյուսիսային Եվրոպայի պետությունները, որտեղ հասարակությունը, հաղթահարելով գոյություն ունեցող կարծրատիպերը, կանանց հնարավորություն է տվել մասնակցելու երկրի կառավարմանը եւ որոշումների կայացմանը:

Սկանդինավյան երկրները՝ Դանիան, Նորվեգիան, Շվեդիան շատ լավ հայտնի են քաղաքականության մեջ եւ պետության բարձրագույն մարմիններում կանանց ներկայության բարձր թվով: Կանանց ըստ արժանվույն գնահատելու եւ նրանց դերը հասարակական, քաղաքական կյանքում բարձրացնելու խնդիրը այս երկրներում ավարտական փուլին հասավ վերջին 30-35 տարիների ընթացքում: Եվ դա տեղի ունեցավ ոչ միայն կանանց պայքարի, իրենց դերի կարեւորության հաստատման հետեւողականության արդյունքում, ոչ միայն երկրի քաղաքական վերնախավի բարյացակամության շնորհիվ, այլ, որ ամենակարեւորն է, հասարակության սոցիալական հասունացման պայմաններում, երբ այդ երկրները հասել էին շատ բարձր կենսամակարդակի, երբ մարդիկ թոթափելով սոցիալական խնդիրները, իրենց հայացքն ուղղեցին հասարակության արդարացի ղեկավարման խնդիրներին, որոնց շարքում նաեւ կանանց դերի անհրավացի անտեսմանը:

Այս երկրներում ոչ սահմանադրական եւ ոչ էլ օրենսդրական հատուկ օրենքներ կային կանանց ներկայությունը ընտրովի մարմիններում ավելացնելու համար: Կանայք կազմակերպեցին իրենց ուժերը, ճշտեցին նպատակները եւ ուժեղացնելով ճնշումը քաղաքական կուսակցությունների վրա, ստիպեցին, որպեսզի նրանք ցուցակներում ավելացնեն հաղթելու շանս ունեցող կանանց թվաքանակը:

Երկար տարիների պայքարի արդյունքում կանանց ներկայացուցչությունը ավելացավ ինչպես կուսակցությունների ներսում, ղեկավարության մեջ, այնպես էլ նրանց միջոցով քաղաքական եւ պետական մարմիններում: Դա դարձավ կանանց խմբերի եւ ընդհանրապես կանանց բոլոր

ուղղություններով շարժման ակտիվացման ձեռքբերումը:

Սակայն, ճշմարտությունը պահանջում է ասել, որ այդ պայքարի ճանապարհը այնքան էլ հարթ չէր եւ կանայք ստիպված էին շատ խոչընդոտներ հաղթահարել, որովհետեւ որոշ կուսակցություններ ոչ միայն չէին արձագանքում նրանց պահանջներին, այլեւ խանգարում էին: Բայց եւ այնպես, անցած դարի 70-ական թվականներին վերջնականապես կոտրվեց քաղաքական դաշտի դիմադրությունը: Սկանդինավյան երեք երկրներում, քաղաքական կուսակցությունների որոշմամբ, ներդրվեցին գենդերային քվոտաներ: Սկզբնական շրջանում (1970-90 թթ.) քվոտաներ ներդրվեցին սոցիալ-դեմոկրատական եւ ձախ կուսակցություններում, այնինչ կենտրոնամետ եւ աջ կուսակցություններից շատերը քվոտաները համարեցին «ոչ ազատական»:

Կուսակցություններում գենդերային քվոտաների օգտագործումը առավել արագ տարածում գտավ Նորվեգիայում: 1970 թվականին խորհրդարանում ներկայացված միայն երկու կուսակցություն, որոնք ընդամենը 4 տոկոս ներկայություն ունեին, իրենց մեջ ուժ գտան ճեղքելու գոյություն ունեցող տաբուն եւ օգտագործեցին քվոտաներ կանանց համար: Իսկ ընդամենը յոթ տարի անց, նույն խորհրդարանում պաշտոնապես քվոտաներ ներդրեցին ներկայացված յոթ կուսակցություններից հինգը, որոնք ունեին խորհրդարանական տեղերի 75 տոկոսը:

Նորվեգիայի լեյբորիստական կուսակցությունը 1983 թվականին որոշում ընդունեց այն մասին, որ բոլոր ընտրությունների ժամանակ եւ ընտրովի մարմիններում թեկնածուներ առաջադրելիս երկու սեռերը պետք է ներկայացված լինեն ոչ պակաս, քան 40 տոկոս:

Դանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ճիշտ նույնպիսի որոշում կայացրեց 1988 թվականին:

Շվեդիայում 1994 թվականին սկզբունք ընդունվեց, որ ընտրացուցակներում յուրաքանչյուր երկրորդը պետք է կին լինի:

Անհրաժեշտ է նշել, որ այս երկրներից մեկում՝ Նորվեգիայում, լեյբորիստները քվոտաները օգտագործում են բոլոր մակարդակների, իսկ Դանիայում՝ միայն տեղական եւ օկրուգային ընտրություններում: Այնուհանդերձ մի բան հստակ է, որ երկու երկրներում էլ կարեւորվում է կանանց ներկայությունն ու մասնակցությունը որոշումների ընդունման մեջ:

Շատ ուսանելի է, որ այս երկրներում ընտրությունների ժամանակ քվոտաներ օգտագործող կուսակցությունները դրանք օգտագործում են նաեւ ներկուսակցական մարմինների եւ ղեկավարության ընտրության ժամանակ:

Հետեւողականորեն ապահովելով առաջընթացը, Հյուսիսային Եվրոպայի այս երեք պետություններում կանանց ներուժի օգտագործման լավագույն ցուցանիշներ են գրանցվել: 2002 թվականին Շվեդիայի պառլամենտում կանանց թիվը հասել է 42, Դանիայում՝ 38, Նորվեգիայում 36 տոկոսի:

Սակայն, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, քվոտաները չեն կարող հասարակական գիտակցության վրա այնպիսի ազդեցություն ունենալ, որ հասարակությունը որոշումների կայացման մակարդակներում կանանց դերը կարողանա արժեւորել եւ նրանց ներկայությունը հասցնել 30-40 տոկոսի:

Դրա լավագույն օրինակը Ֆրանսիան է, որի համընդհանուր զարգացածության աստիճանը կասկածներ չի հարուցում: Եվ ահա, Ֆրանսիան, որը կանանց ընտրվելու իրավունքը պաշտպանելու համար կիրառում էր քվոտաների բոլոր ընդունված տեսակները՝ սահմանադրական, օրենսդրական, կուսակցական, 1999 թվականին, այն ավելի ամրապնդելու, ավելի իրական դարձնելու համար, ուղղում մտցրեց նույնիսկ երկրի Սահմանադրության մեջ, ըստ որի կանանց թիվը բոլոր ընտրովի մարմիններում պետք է 50 տոկոս կազմի, այլ պարագայում կուսակցությունների նկատմամբ կիրառվում են ֆինանսական սանկցիաներ:

* * *

Բազմիցս ասվել է, որ փոքրիկ Հայաստանի լավագույն կապիտալը նրա մտավոր ներուժն է: Բարձրագույն կրթությամբ կանայք այդ ոլորտում կեսից ավելին են, եւ տղամարդկանցից որոշակի չափով մեծ թիվ են կազմում նաեւ գիտությամբ զբաղվողները: Իհարկե, նպատակահարմար է, որ երկիրը ղեկավարեն, եթե չասենք լավագույնները, ապա գոնե արժանավորները, որոնք, բնականաբար, որքան տղամարդկանց մեջ են, նույնքան էլ կանանց: Իսկ ինչպես հայտնի է, այդ կեսի կարողությունները

օգտագործվում են նվազագույնս: Բոլոր այն դատողությունները, թե կնոջ պատասխանատու աշխատանքից կտուժի ընտանիքը, ընդամենը մոլորություն է:

Մեր բոլոր հանդիպումների եւ զրույցների ընթացքում հասարակական ակտիվ կյանքով զբաղվող կանայք մեկ պարզ փաստ են նշում. կինը, որ ունի ընտանիք, երեխաներ, մասնագիտություն եւ ձգտում է նաեւ ներգրավվել հասարակական-քաղաքական գործունեության մեջ, դա անում է որոշակի տարիքում, երբ կայացած է ընտանիքը, երեխաները մեծացել են եւ նա իր ազատ ժամանակը նպատակահարմար է գտնում տնօրինել այնպես, ինչպես կամենում է:

Իսպանիայի խորհրդարանի անդամ Աննա Բալետբոն նույն կարծիքն է հայտնում. «Քաղաքականության մեջ ներգրավվելը կամ քաղաքական պաշտոններում ընտրվելը ընտրություն չէ մասնավոր կամ հասարակական կյանքի միջեւ: Կանայք պետք է վճռեն՝ ինչի են ուզում հասնել կյանքում եւ իրենց նպատակները դասավորեն ըստ կարեւորության: Ամեն նպատակ իր ժամանակն ունի՝ ամուսնությունը, երեխաներ ունենալն ու դաստիարակելը, մասնագետ կամ պատգամավոր դառնալը: Կյանքը շարունակվում է եւ կանայք կարող են շատ բանի հասնել»:

Ընտանիքը կնոջ համար առաջնային ու կարեւոր է, եւ կանայք, ովքեր մասնագետներ են, գործարար են կամ ղեկավարելու կարողություններ եւ ցանկություն ունեն, հրաշալի կարող են համատեղել աշխատանքը ընտանեկան կյանքի, տնային պարտականությունների եւ մայրական հոգսերի հետ:



Եթե ընտանիքը համարենք պետության մոդել, ապա, ինչպես վերջինս լիարժեք չէ հասարակության կեսից ավելին կազմող անդամների նվազագույն ներկայությամբ կամ իսպառ բացակայությամբ, այնպես էլ լիարժեք չէ ընտանիքը՝ կողմերից մեկի բացակայությամբ: Իսկ ոչ լիարժեք ընտանիքում (ամուսնու կամ կնոջ բացակայության պայմաններում) ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը՝ որոշումների ընդունումը եւ կատարումը, ընտանեկան բյուջեի ձեւավորումը եւ իրացումը, առողջապահական, կրթական, սոցիալական, ինչպես նաեւ արտաքին հարաբերությունները իրականացնում է կինը կամ տղամարդը: Հետեւանքները պարզ են: Ինչ-որ հարցեր դուրս են մնում տեսադաշտից, որոշ բաներ անտեսվում են, կիսատ-պռատ է իրականացվում երեխաների դաստիարակությունը եւ էլի շատ կարեւոր խնդիրներ: Փոքր-ինչ տարբերությամբ պատկերը նույնն է նաեւ լիարժեք ընտանիքներում, որտեղ վերը նշված բոլոր խնդիրների մեծ մասը ընկնում է կնոջ ուսերին:

Նույնը կատարվում է պետության մեջ, որտեղ որոշումների կայացման եւ իրականացման, օրենքների ընդունման եւ դրանց կատարման վերահսկողության գործառույթներում բացակայում են հասարակության կեսից ավելին կազմող կանայք: Բնական հարց է առաջանում՝ եթե մարդու կենսագործունեության համար այդքան կարեւոր բնագավառում, ինչպիսին ընտանիքն է, կարելի է շատ բան վստահել կնոջը, ապա ինչու պետական եւ քաղաքական դաշտերում չի կարելի: Հետաքրքիր է, որ որեւէ այլ մասնագիտությամբ աշխատելու կանանց ցանկությանը չի ընդդիմանում ոչ ոք, իսկ, այ, քաղաքական ասպարեզ մտնելու հարցում ընդդիմություն կա եւ տղամարդկանց, եւ հասարակության կողմից:

Առավել եւս, երբ դա վերաբերում է հայ կնոջը, որը անուրանալի դեր ունի ընդհանրապես հայ իրականության եւ մասնավորապես Հայաստանի անկախացման դժվարին տարիներին ներքին ու արտաքին բազմաթիվ արհավիրքներին տղամարդկանց հետ դիմակայելու, հավասարը հավասարի պատերազմի դաշտում կռվելու եւ թիկունքն ապահովելու, երկրաշարժի ժամանակ ավերակների վերածված երկիրը վերականգնելու գործում: Անգնահատելի եղավ կանանց դերը նաեւ սոված, մութ ու ցուրտ տարիներին երկրի կայունությունը պահպանելու, հասարակությանը սոցիալական բունտի չմղելու գործում: 1994 թվականի ՄԱԿ-ի տեղեկագրերից մեկում, մեր երկրին վերաբերող հատվածում, հատկապես ընդգծվում էր կանանց դերը երկրում հանդուրժողական մթնոլորտի եւ բացառիկ համբերատարության դրսեւորման մեջ:

Հայտնի ճշմարտություն է, որ բնության մեջ ոչ մի բան կատարյալ չէ, եթե պահպանված չէ հավասարակշռությունը: Սա օբյեկտիվ օրենք է, որը չի շրջանցում նաեւ պետական կառույցը իր օրենսդիր եւ գործադիր իշխանությամբ:

Եթե շրջենք պատմության էջերը (ինչպես հեռավոր, այնպես էլ ոչ վաղ անցյալի), կտեսնենք, որ հայ հասարակությունը, իրոք, գենդերային խնդիրներ չի ունեցել: Դեռեւս մ. թ. 5-րդ դարում (443 թ.) Շահապիվանի օրենսգրքով, կնոջն իրավունք էր տրվում տիրանալու ընտանեկան գույքին, եթե ամուսինն առանց հիմքի լքել է նրան:

11-րդ դարում, Դավիթ Ալավկաորդու կանոններով, ամուսնությունն օրինական էր ճանաչվում, եթե հարսնացուն եւ փեսացուն իրենց համաձայնությունը տալիս էին, ինչը պետք է լիներ փոխադարձ եւ կամավոր: Ամուսնությունը համարվում էր անվավեր, եթե հիմնված էր բռնության վրա:

12-րդ դարում, Մխիթար Գոշի Դատաստանագրքով արգելվում էր բռնությունն ընդդեմ կանանց եւ քրեական պատիժներ էին նախատեսվում բոլոր նրանց համար, ովքեր բռնություն էին կիրառում կանանց դեմ: Նույնպիսի օրենքներ էին գործում նաեւ Կիլիկիայի թագավորությունում Սմբատ Սպարապետի (Գունդստաբլի) օրենսգրքով:

Ինչպես տեսնում ենք, վաղ անցյալում էլ, նախորդ երկու դարերում էլ մեր հասարակությունը չի ունեցել գենդերային խնդիրներ: Արդեն նշել ենք, որ հայ կինը մեծ ակտիվությամբ մասնակցել է նաեւ հայ ժողովրդի ազգային, իսկ Առաջին եւ Երկրորդ հանրապետությունների ժամանակ նաեւ բարձր մակարդակի քաղաքական եւ պետական որոշումների ընդունմանը:

Մեր պետական եւ քաղաքական գործիչները տարբեր առիթներով պնդում են, որ մեր երկրում գենդերային խնդիրներ չկան: Ինչ վերաբերում է սահմանադրական, օրենսդրական արգելանքներին, իրոք, դրանք չկան, եւ այդ իմաստով նրանք անկեղծ են: Սակայն այդպիսի խնդիր կա, թե ոչ, պետք է դատել՝ ելնելով արդյունքներից եւ գոյություն ունեցող իրականությունից: Իսկ արդյունքների ակնհայտ պատկերը մեր երկրի Ազգային ժողովի եւ կառավարության գրեթե միասեռ ներկայացուցչությունն է:

Ուսումնասիրությունների ընթացքում մեկ անգամ եւս համոզվել ենք, որ հայ կանայք շատ հեռու են ֆեմինիստական գաղափարներից, բայց դրանք չկիսելով հանդերձ նաեւ հասկանում են «դեմոկրատական արժեքներ» դավանող Արեւմուտքում ծնված այս շարժման դրդապատճառները, որոնցից շատերը մինչեւ այժմ էլ վերացված չեն: Դա առավել քան ցավալի է եւ մտահոգիչ, քանի որ հենց այդ Արեւմուտքը ներկայացնող միջազգային կառույցներն են մեր երկրում, երբեմն չափազանցված ակտիվությամբ եւ հիմնականում անընդունելի ձեւերով ու հիմնավորումներով, քարոզում կանանց քաղաքական իրավունքների պաշտպանության խնդիրները, իրենց ֆինանսական եւ գաղափարական հովանու ներքո հավաքելով կանանց (անհատներին եւ ՀԿ-ներին) առավել ակտիվ մասը: Եվ քանի որ մեր պետական որեւէ կառույց չի մտահոգվում այս հարցով, իսկ կանանց հարցերով զբաղվող հատուկ կառույց այդպես էլ չի ստեղծվում, այն իրենց ձեռքն են վերցնում օտարները:

Հենց այդ կառույցներից մեկը՝ ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարության ինստիտուտը, 2006 թվականի մարտին, աջակցելով իր իսկ ներկայացուցիչների կողմից ստեղծված «Կին առաջնորդ» ֆորումի կայացմանը, պարբերաբար հնարավորություն էր ընձեռում կանանց քննարկելու հատկապես ընտրություններին մասնակցելու խնդիրները: Ֆորումի կազմում ընդգրկված էին ՀԿ-ներ, քաղաքական կուսակցություններ, կառավարական եւ բիզնես ոլորտներ ներկայացնող կանայք: Նախընտրական տարում, հատկապես կարեւորելով Ընտրական օրենսգրքում փոփոխությունների քննարկման հարցը, այս ֆորումը առաջարկեց Ընտրական օրենսգրքում կանանց ներկայության քվոտան բարձրացնել մինչեւ 25 տոկոս: «Կին առաջնորդ» ֆորումը քաղաքական քսան կուսակցության (ընդ որում՝ ԱԺ-ում ներկայացված բոլոր, բացի ՀՀԿ-ից) եւ մոտ քառասուն ՀԿ-ի համաձայնություն ձեռք բերեց, բացի այդ, առաջարկվող հարցի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը ուղարկվեց ԱԺ-ի բոլոր 131 պատգամավորներին:

Սակայն, ապարդյուն, Ընտրական օրենսգրքում պահպանվեց կանանց համար նախատեսված 15 տոկոս քվոտան: Պատճառների համար պետք չէ շատ խորաթափանց լինել, հայ տղամարդիկ պատրաստ չէին իրենց կողքին «հանդուրժել» ավելի մեծ քանակի կանանց ներկայությունը:

Իսկ թե ինչպիսի՞ն է պատկերը հիմա եւ ինչու՞, կփորձենք ներկայացնել հաջորդիվ:

(Շարունակելի)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում բացահայտ հիմնազուրկ է ժամանակակից Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը: Ընդհանուր առմամբ թուրքական ներկայիս կառավարողները, թուրք վայ-պատմաբանները պատմությունը կեղծելու, պատմական իրողությունները նենգափոխելու միջոցով ժխտում են 20-րդ դարի առաջին՝ Հայոց ցեղասպանությունը: Նրանք հրատարակում են բազմաթիվ գրքեր, ֆեղումներ են կատարում գերեզմաններում, տպագրում են «10 հարց ու 10 պատասխան»-ի ձեւով զրպարտագրեր, աշխարհի շատ երկրներ հեղեղում են բազմաթիվ կեղծիքներով լցված գրականությամբ եւ այդ ամենի հիման վրա կաշվից դուրս են գալիս, որպեսզի ցույց տան, որ հայերի ցեղասպանություն չի եղել, այլ հայերն են ցեղասպանության ենթարկել թուրքերին:

Ստեփան ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, Տեղեկատվության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս

Այստեղ տեղին է հիշեցնել այն դարձվածքը, որ աստով ու կեղծիքով աշխարհն էլ կանցնես, սակայն հետ չես կարող դառնալ: Առանց տարակուսանքի կարող եմ ասել, որ եթե ինձ հարցնեին, թե որն է աշխարհի ամենամեծ սուտն ու կեղծիքը 20-րդ եւ 21-րդ դարերի ընթացքում, ես կասեի՝ Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության ժխտումը: Թուրքական կեղծարարները միշտ էլ մերկացվել ու ստացել են արժանի եւ անվիճելի պատասխաններ: Բերենք դրանցից միայն մեկը: Հիշեցնենք, որ 1922 թվականի նոյեմբերի 20-ից մինչեւ 1923 թվականի հուլիսի 24-ը Լոզանում (Շվեյցարիա) տեղի ունեցավ Մերձավոր Արեւելքի հարցերի վերաբերյալ միջազգային կոնֆերանս, որին մասնակցում էին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Հարավսլավիան եւ Թուրքիան: ԱՄՆ-ը մասնակցում էր որպես դիտորդ, իսկ ռուս-ուկրաինական պատվիրա-

կությունը մասնակցում էր միայն սեւծովյան նեղուցների հարցի քննարկմանը: Եվ, ահա, կոնֆերանսի 1922 թ. դեկտեմբերի 13-ի ռազմա-տարածքային հանձնաժողովի տասնչորսերորդ նիստում Մեծ Բրիտանիայի պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի նախարար, լորդ Ջորջ Քերզոնը, պատասխանելով թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինոնյուին, հայտարարեց. «Եթե երկու ժողովուրդների (թուրքերի եւ հայերի - Ս. Ս.) միջեւ միշտ գոյություն են ունեցել երջանիկ հարաբերություններ, ապա այդ ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով հասել է 130 հազարի: Արդյո՞ք նրանք ինքնասպանություն են գործել, թե՞ անհետացել են կամավոր կերպով... Վերջապես ինչո՞ւ է Հայկական հարցը հանդիսանում աշխարհի ամենամեծ խայտառակություններից մեկը»[1]:

Ջորջ Քերզոնի հայտարարությունը ճշմարտություն է:

Վերջին ժամանակներս հայերի ցեղասպանության վերաբերյալ հայտնաբերվել եւ հրապարակվել են նոր ու կարեւոր աղբյուրներ եւ փաստաթղթեր:

Երկարատեւ որոնումների արդյունքում, գերմանական Բադեն-Բադեն քաղաքի արխիվում պահպանվող գերմանական արտաքին քաղաքականության փաստաթղթերի ժողովածուի (1937-1945) «D» սերիայի 7-րդ հատորի 171-րդ էջում զետեղված է այն արտահայտությունը, որն արվել է 1939 թ. օգոստոսի 22-ին: Այն ներկայացնում ենք տողերիս հեղինակի գերմաներենից հայերեն թարգմանությամբ: Ահա այն. «Ես հրամայել եմ... այն մասին, որ պատերազմի նպատակը ոչ թե որոշակի սահմանագծի հասնելն է, այլ հակառակորդի ֆիզիկական բնաջնջումը: Արդ, ես հրահանգել եմ իմ ընտիր մահապարտներին անգութ եւ անխնա բնաջնջել լեհական ցեղին ու լեզվին պատկանող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այդպես մենք կարող ենք նվաճել մեզ անհրաժեշտ կենսատարածքը: Ի վերջո ո՞վ է հիշում այսօր հայերի բնաջնջումը»:

Հետազոտողների տվյալներով ներկայումս Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության արխիվներում Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունեն ավելի քան երեք հազար փաստաթղթեր, որոնցից միայն մի մասն է հրապարակվել: Եվ ահա այդ փաստաթղթերի մի մասը ծավալուն ժողովածուով կազմել ու հրապարակել է գերմանացի հայտնի հրապարակախոս, լրագրող, հմուտ հետազոտող Վոլֆգանգ Գուստը[2]: Շուրջ 700 էջանոց այդ ժողովածուն նոր լույս է սփռում Հայոց ցեղասպանության հաստատման, միջազգային ճանաչման ու դատապարտման ասպարեզում: Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ այդ ժողովածուն կարեւոր դեր խաղաց 2005 թվականի հայերի ցեղասպանության վերաբերյալ Գերմանիայի Բունդեսթագի կողմից բանաձեւ ընդունելու գործում: Ցավոք, աշխարհի մեծ տերություններից մեկը՝ Գերմանիան, Թուրքիայի ճնշման ներքո, բանաձեւում չի օգտագործել ցեղասպանություն-գենոցիդ բառը: Այդու հանդերձ բանաձեւում գրված է. «Բունդեսթագը ցավում է Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության արարքների համար, որոնք հանգեցրել են Անատոլիայի հայերի գրեթե լրիվ բնաջնջմանը: Նա ցավում է նաեւ գերմանական ռայխի անփառունակ դերի համար, որը բազմակողմանիորեն իրազեկ լինելով հայերի նկատմամբ կազմակերպված հալածանքների ու բնաջնջման մասին, նույնիսկ չի փորձել կասեցնել ոճրագործությունները»: Փաստորեն բանաձեւում արտացոլված է հայերի ցեղասպանության իմաստը, էությունը: Դրանով Գերմանիան միանում է աշխարհի այն պետություններին, որոնք ըստ էության ճանաչում են հայերի ցեղասպանությունը, դատապարտում ցեղասպան թուրքական պետությանը:

Տողերիս հեղինակը, սեփական նախաձեռնությամբ, կազմակերպել է այդ նորահայտ փաստաթղթերից առավել կարեւորների թարգմանությունը գերմաներենից ռուսերեն եւ իր խմբագրությամբ, առաջաբանով եւ ծանոթագրություններով հրատարակել է Երեւանում[3]: Այդ փաստաթղթերը, ինչպես գերմաներեն, այնպես էլ ռուսերեն, հրապարակվել են առաջին անգամ:

Փաստաթղթերի ռուսերեն ժողովածուն սկսվում է Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմի՝ արտաքին գործերի պետական քարտուղար Գոտլիբ ֆոն Յագովին 1913 թ. հունիսի 5-ին ուղարկած նամակով: Այնտեղ նա գրում է. «Առանց հայկական հարցի լուծման անհեռանկար է ուզած քաղաքականություն, որն ուղղված է թուրքական տիրապետության դադարեցմանը... Այն հանգամանքը, որ թուրքերը չեն կարող համատեղ ապրել հայերի հետ, պայմանավորված է հայերի համեմատ թուրքերի տնտեսական անընդունակությամբ: Այդ կապակցությամբ բնորոշ է Ադանայի օրինակը: Մի քանի տարի առաջ այնտեղ տեղի ունեցան հայերի կոտորածներ, եւ այն ամենը, ինչ պատկանում էր հայերին, իսպառ ավերվեց ու

այրվեց... Վայրագությունը կարելի է կանխել միայն եվրոպական ներկայացուցիչների առկայությամբ: Հյուպատոսները անբավարար են: Այնտեղ պետք է լինեն այնպիսի մարդիկ, որոնք ունակ են մարտի մեջ մտցնել ոստիկանության կամ զինվորական միավորում»[4]:

Ինչպես տեսնում ենք, հետաքրքիր մոտեցում ու դատողություն է ցուցաբերում փորձված դիվանագետ Վանգենհայմը, սակայն երբ սկսվեց առաջին աշխարհամարտը, նա հանդես եկավ բացահայտ հակահայկական ու թուրքամետ դիրքորոշմամբ:

Որպես գերմանական աղբյուր, առաջին անգամ հրապարակվում է այն պաշտոնական փաստաթուղթը, որը հաստատում է Հայոց Մեծ եղեռնը խորհրդանշող օրը՝ ապրիլի 24-ը: 1915 թ. ապրիլի 30-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղարկած զեկուցագրում հաղորդում է, որ «ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը եւ ամբողջ կիրակի ու երկուշաբթի՝ 26-ի օրը այստեղ կատարվել են բազմաթիվ հայերի ձերբակալություններ... Ձերբակալվածները հիմնականում բժիշկներ, լրագրողներ, գրողներ, հոգեւորականներ, ինչպես նաեւ մի քանի հայ պատգամավորներ են»[5]:

Գերմանական նորահայտ փաստաթղթերում նշված են այն միջոցներն ու մեթոդները, որոնցով իրականացվում էր հայերի ցեղասպանությունը: Նույն Վանգենհայմը 1915 թ. հուլիսի 13-ին ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղարկում է գերմանա-ամերիկյան որբանոցում աշխատող գերմանուհի Ֆրիդա Վոլֆ Գունեկեի նամակում նկարագրված հայերի ցեղասպանության աննախադեպ, սարսափելի տեսարաններ: Նա գրում է, որ «սուլթան Համիդի ժամանակվա դաժանությունների փորձով հայ բնակչությունը սկզբում զինաթափում են եւ այնուհետեւ մորթում»[6]:

Որպես հայ բանտարկյալների նկատմամբ Կեսարիայում թուրքերի կիրառած գազանությունների ականատես՝ նա գրում է. «Հայ կալանավորին դնում էին տախտակի վրա (ինչպես հին հռոմեական ժամանակներում), որի երկու կողմերում եւ ոտքերի մոտ կանգնում էին երկուական ոստիկան: Նրանք մահակներով անընդմեջ ու հերթափոխությամբ հարվածում էին կալանավորի ներբաններին: Հին հռոմեացիների ժամանակ հարվածների թիվը ընդունված էր 40, իսկ թուրքերի մոտ՝ մինչեւ 800: Այդ ձեւով բոլոր հայ կալանավորները ջարդված ոտքերով ու արյունաշաղախ նահատակվում էին: Բացի այդ միջոցից, թուրքական ոստիկանները տարբեր տարիքի կանանց, տղամարդկանց ու երեխաների կրծքավանդակներն այրում էին շիկացած երկաթով, ծծմբաթթվով այրում էին ոտքերի մատները, դաժան միջոցներով ուռեցնում էին որովայնը եւ քայլում դրա վրայով, թրիք էին խցկում բերանները, քաշում պոկում էին ձեռքերի եղունգները կամ ասեղներ էին մտցնում եղունգների տակ:

Չբավարարվելով այդ խոշտանգումներով, թուրք ոստիկանները տեղահանության ճանապարհներին հայ կանանց նորածիններին նետում էին ջուրը կամ ժայռերին»:

Ֆրիդա Վոլֆը գրում է նաեւ, որ սիրիական անապատներ տեղահանված հայերը բացարձակապես մնում էին առանց հացի ու ջրի եւ մեռնում էին սովից ու հիվանդություններից: Երբ որեւէ մեկը դիմում էր թուրք ոստիկաններին ու չինովնիկներին, թե որն է այդ դաժանությունների պատճառը, նրանք պատասխանում էին. «Այդպես են հրամայել գերմանացիները»[7]:

Ֆրիդա Վոլֆը հետեւություն է անում. «Եթե մենք՝ գերմանացիներս, մեզ համարելով Թուրքիայի բարեկամներ ու այդ ամենը տեսնելով հանգիստ լռում ենք, ապա մենք վայրենիներ ենք»[8]:

Հայերի ցեղասպանության ականատես գերմանացի մայոր Ֆոն Միկուշը պատմում է, որ 3000 բնակչությամբ հայկական մի գյուղում թուրքական զինված խմբերը հայերի մի մասին նետում էին ջրհորները, իսկ մյուս մասին այրում էին նավթով, ողջակիզում էին[9]: Այսպիսով ողջակիզումը սկզբում կիրառվել է հայերի նկատմամբ, իսկ հետո՝ երկրորդ աշխարհամարտի ժամանակ, հրեաների նկատմամբ:

Նորահայտ փաստաթղթերում հայերի ցեղասպանության միջոց էր նաեւ բռնի թուրքացումն ու իսլամացումը: 1915 թ. դեկտեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս Մորդմանը գրում է, որ հայերի բռնի թուրքացումն ու իսլամացումը առավել լայն շրջանակներով իրականացվել է Տրապիզոնի մարզում[10], իսկ Սամսունի փոխհյուպատոս Կուկհոֆը հաղորդել է, որ հայ եկեղեցիները վերածվում են մզկիթների[11]:

Նորահայտ փաստաթղթերում որոշակիորեն բացահայտվում են թուրքական ռազմական իշխանությունների, նրանց ղեկավարների հրամանները հայերի տեղահանությունների ու բնաջնջման մասին: 1915 թ. օգոստոսի 29-ին գերմանական նախարար-ռեզիդենտ (հետախուզության գաղտնի ղեկավար) Մաքս ֆոն Օպպենհայմը ռայխսկանց-

լեր Բեթման Հոլվեգին ուղարկած հաղորդագրության մեջ հայտնում է, որ հանդիպել է Ջեմալ փաշայի հետ եւ ծանոթացել նրա այն հրամաններին, որոնք վերաբերում էին տեղահանված հայերի նկատմամբ գործողություններին: Այդ հրամաններից մեկը ստորագրվել է 1915 թ. մարտի 16-ին (թուրքական հին տոմարով): Փաստաթղթում նշված է, որ Զեյթունի շրջակայքում անհրաժեշտ է կանխել կամ դադարեցնել թուրք բնակչության խժդժությունները, որպեսզի տեղահանվող հայերի դեմ կիրառվող գործողությունները իրականացվեն հիմնականում զինվորականների կողմից: 1915 թ. ապրիլի 2-ին Ջեմալ փաշան ստորագրում է մեկ այլ հրաման, որով պարտադրվում է թուրքական տեղական իշխանություններին՝ իրագործել հայ բնակչության համընդհանուր տեղահանություն[12]: Այնուհետեւ, 1915 թ. ապրիլի 28-ին, մայիսի 25-ին, հունիսի 4-ին ու 10-ին արձակած հրամաններով, Ջեմալ փաշան խնդիր է դնում հայերի տեղահանությունը կազմակերպել եւ իրագործել այնպես, որպեսզի հայերի նկատմամբ կատարած դաժանությունների մասին լուրերը չհասնեն արտասահմանյան երկրներ:

Ի՞նչ է ցույց տալիս վերոնշյալ փաստաթուղթը: Այն հաստատում է, որ հայերի տեղահանության ու ցեղասպանության մասին, բացի Թալեաթ փաշայի հրամաններից, եղել են նաեւ Ջեմալ փաշայի հրամանները:

Նորահայտ փաստաթղթերում, բացի արեւմտահայության տեղահանության եւ զանգվածային կոտորածներից-ցեղասպանության թուրքական քաղաքականության ու գործողությունների վերաբերյալ պաշտոնական զեկուցագրերից, տեղ են գտել նաեւ հայերի ցեղասպանությանը կայզերական Գերմանիայի մեղսակցությունը հաստատող նոր վավերագրեր: Դրանցից մեկը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վոլֆ Մետերնիխի 1915 թ. դեկտեմբերի 7-ին ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղարկած զեկուցագիրն է եւ դրա հետ կապված գերմանական վարչապետի՝ ռայխսկանցլերի պատասխանը: Դեսպանը գրում է. «Վերջին շաբաթներին հայկական սարսափների մասին խոսել եմ էնվեր փաշայի, Խալիլ բեյի, իսկ այսօր Ջեմալ փաշայի հետ եւ ասել եմ, որ այդ ամենի նկատմամբ հուզումներն ու զայրույթը տարածվել են արտասահմանյան երկրներում ու հատկապես Գերմանիայում... Ջեմալ փաշայի շտաբի պետ Ֆոն Կրեսը ինձ հետ խոսելիս շեշտել է, որ այս աղետը աննկարագրելի է, եւ գերազանցում է նախորդ բոլոր պատկերացումները: Ի դեպ՝ տարածում է գտել այն տեսակետը, որ գերմանացիք համաձայնվել են կոտորածների հետ»[13]: Վոլֆ Մետերնիխը նշում է, որ Կոստանդնուպոլսի ոստիկանության պետի հայտարարությամբ քաղաքից տեղահանվել է 4000 հայ եւ խնդիր է դրված վերջ տալ այդ քաղաքում ապրող շուրջ 80 հազար հայի գոյությանը:

Հարկ է ասել, որ գերմանացի դեսպան Վոլֆ Մետերնիխը, որը գերմանական դիվանագետների մեջ առավել մարդասեր եւ արդարամիտ էր, առաջարկում էր Գերմանիայի կառավարողներին կոնկրետ ու զորեղ միջոցներով դադարեցնել հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը:

Ջեկուցագիրն ստանալուց տասն օր անց, դեկտեմբերի 17-ին, ռայխսկանցլերը գրավոր հայտնում է իր տեսակետը: Ահա այն. «Մեր միակ նպատակը հանդիսանում է մինչեւ պատերազմի վերջը Թուրքիային պահել մեր կողմը, մեզ համար միեւնույն է՝ կկոտորվեն հայերը, թե ոչ: Պատերազմի առավել շարունակման դեպքում թուրքերը մեզ դեռ շատ պետք կլինեն: Չեմ հասկանում, ինչպես կարող է Մետերնիխը այդպիսի բան առաջարկել»[14]:

Հայերի նկատմամբ նման միտք է արտահայտել նաեւ Գերմանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Ցիմմերմանը: Նա ուղղակի հայտարարել է. «Ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է Գերմանիայի շահերին»[15]:

Գերմանիայի պաշտոնական շրջանների նման դիրքորոշումը էլ ավելի էր նպաստում թուրքական իշխանությունների, հակահայկական մոլեռանդների բարբարոսություններին: Ըստ նորահայտ փաստաթղթերից մեկի՝ 1915 թվականի սեպտեմբերի 2-ին, երբ գերմանացի զինվորական ծառայողներից մեկը դիմում է հայերի տեղահանության հանճնաժողովի թուրք նախագահին՝ չորս հայ երեխաների ազատ արձակելու մասին, ստանում է հետեւյալ պատասխանը. «Դուք չեք հասկանում, թե մենք ինչ ենք մտածում: Մենք ուզում ենք արմատապես ոչնչացնել հայանունը... Մենք ուզում ենք միայն ու միայն թուրքերի գոյությունը»[16]:

Նորահայտ փաստաթղթերի համառոտ ներկայացումից հետո հարկ եմ համարում անել հետեւյալ եզրահանգումը: Անցած ավելի քան հինը տասնամյակների ընթացքում ցավոք չեն վերացել 20-րդ դարի առաջին մեծ ողբերգության՝ Հայոց ցեղասպանության հետեւանքները: Երիտթուրք կա-

ռավարողներից հետո այդ չարիքը շարունակվել է քեմալականների կողմից, իսկ այժմ՝ ժամանակակից Թուրքիայի կառավարողները աննախադեպ ստով ու կեղծիքով ձգտում են ժխտել մարդկության դեմ կատարված այդ մեծ հանցագործությունը: Հայոց ցեղասպանությունը ժխտելու փորձը աշխարհի ամենամեծ կեղծիքն է ինչպես 20-րդ դարում, այնպես էլ 21-րդ դարում: Հայերի ցեղասպանության հետեւանքով նահատակվել է այն ժամանակվա հայության գրեթե կեսը: Դա անվերադարձ կորուստ է: Բացի դրանից, հայությունը կորցրել է իր բնօրրանի, իր պատմական հայրենիքի տարածքի 90 տոկոսը՝ ամբողջ Արեւմտյան Հայաստանը, Կիլիկիան եւ հայոց խորհրդանիշը՝ Արարատ լեռը: Ցեղասպանության թուրքական քաղաքականությունից ու գործողություններից արեւմտահայությանը եւ նաեւ արեւելահայությանը հասցված է նյութական հսկայական վնաս:

Այո, Հայոց ցեղասպանության գլխավոր հետեւանքը հայրենիքի տարածքի մեծ մասի կորուստն է, բնակչության ոչնչացումը եւ նյութական հսկայական վնասը: Այդ հետեւանքների վերացումը ենթադրում է գոնե հայությանը վերադարձնել Արեւմտյան Հայաստանը եւ հատուցել նյութական վնասը:

Միայն ցեղասպանության հետեւանքների վերացմամբ կարելի է կանխել նոր ցեղասպանությունները: Արդյոք ժամանակը չէ՞, որ Հայաստանի կառավարությունն իր ներկայացուցչության միջոցով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանին առաջարկություն ներկայացնի ցեղասպանության վերաբերյալ 1948 թ. դեկտեմբերի 9-ի եւ 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիաներում որպես լրացում ներկայացնելու մարդկության դեմ ուղղված այդ մեծագույն հանցագործության հետեւանքների պարտադիր վերացման խնդիրը: Միայն այդ կերպ հնարավոր կլինի մեկընդմիշտ արմատախիլ անել այդ մեծագույն չարիքը:

ՁԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում: Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ: «Հայաստան», Երեւան, 1972, էջ 750:

2. Wolfgang Gust /Hq./ Der Volkermord an den Armenien 1915/16. Reinberg bei Hamburg, 2005.

3. Вольфганг и Зигрид Густы. Геноцид армян. Официальные документы из германских архивов, публикуемые впервые. Под редакцией, с предисловием и примечаниями доктора исторических наук, профессора Степана Степаняна. Ереван, 2005.

4. Նույն տեղում, էջ 57:

5. Նույն տեղում, էջ 83-84:

6. Նույն տեղում, էջ 136:

7. Նույն տեղում, էջ 140:

8. Նույն տեղում:

9. Նույն տեղում, էջ 210:

10. Նույն տեղում, էջ 300:

11. Նույն տեղում, էջ 301:

12. Նույն տեղում, էջ 196:

13. Նույն տեղում, էջ 291:

14. Նույն տեղում, էջ 293:

15. Архив внешней политики России (АВПР), Ф. Канцелярия, 1914, д. 207, л. 32.

16. “Геноцид армян...”, с. 211.

ԱՄՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Կարեն Վերանյան

Ներածություն

Բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորմամբ պաշտոնական Վաշինգտոնը վերանայեց Միացյալ Նահանգների հետախուզական/հակահետախուզական ռազմավարության սառըպատերազմյան գերակայությունները: 21-րդ դարամուտով և մասնավորապես 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո վերաիմաստավորվեցին արտաքին ու ներքին հետախուզության սպառնալիքների ընկալման, գնահատման և արձագանքման չափորոշիչները: Արդյունքում զգալի ինստիտուցիոնալ տրանսֆորմացիոն գործընթացներ իրականացվեցին երկրի հետախուզական, հակահետախուզական հանրությունում (այսուհետ՝ ԱՄՆ հետախուզական հանրություն/ԱՄՆ ՀՀ), բարեփոխումների ենթարկվեց նաև Միացյալ Նահանգների հետախուզական/հակահետախուզական գործունեությունը կարգավորող օրենսդրական հիմքերի մեծ մասը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ ՀՀ ներսում գործող 16 գերատեսչությունների ու դեպարտամենտների ավելի քան կեսը ունի ռազմականացված ինստիտուտի կարգավիճակ, կարևոր ենք համարում հանգամանորեն անդրադառնալ ԱՄՆ ռազմական հետախուզության ոլորտում իրականացված կառուցվածքային և օրենսդրական բարեփոխումներին (ԱՄՆ ՀՀ-ում գործող 16 ինստիտուտներից մեկն ինքնակա է, 7-ն ունեն քաղաքացիական ուղղվածություն, իսկ մնացած 8 տեսչությունները ենթարկվում են ԱՄՆ պաշտպանության նախարարությանը): Ավելին, գաղտնիք չէ, որ ԱՄՆ քաղաքական որոշումների կայացման մեխանիզմում ավանդաբար զգալի է եղել հատկապես պաշտպանական ոլորտի պատասխանատուների ազդեցությունը, մի հանգամանք, ինչի հետևանքներն այսօր դարձել են առավել քան արդիական:

Ինստիտուցիոնալ տրանսֆորմացիաներ

Վերջին շրջանում ԱՄՆ հետախուզական հանրությունում գործող պաշտպանական դեպարտամենտներում, ինչպես և երկրի պաշտպանության նախարարության հետախուզական, հակահետախուզական կենտրոններում իրականացված կառուցվածքային և օրենսդրական խորքային բարեփոխումները խոսում են ոլորտում վերջիններիս ունեցած վարկանիշի, ինչպես և ԱՄՆ նախագահի վարչակազմի կողմից նրանց տրված լայն լիազորությունների մասին: Պատահական չեն տարբեր վերլուծաբանական հանրույթների պնդումներն այն մասին, որ ԱՄՆ հետախուզական հանրության քաղաքա-

ցիական սեկտորն աստիճանաբար զիջում է իր մրցակցային ռեսուրսները հօգուտ նրա պաշտպանական ճամբարի: Իրապես, 2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո Միացյալ Նահանգների ռազմական հետախուզությունում (այսուհետ՝ ԱՄՆ ՌՀ) տեղի ունեցած ինստիտուցիոնալ տրանսֆորմացիաները վկայում են ոլորտում վերջինիս ազդեցության ընդլայնման միտման մասին: Ստորև ներկայացնում ենք վերջին կես տասնամյակում ԱՄՆ ՌՀ-ում իրականացված կառուցվածքային հիմնական վերադասավորումները:

ԱՄՆ Պենտագոնի օպերատիվ հակահետախուզության դեպարտամենտ (Counterintelligence Field Activity-CIFA)

ԱՄՆ պաշտպանության նախարարության ենթակայության ներքո գործող Օպերատիվ հակահետախուզական դեպարտամենտը (այսուհետ՝ ՕՀՀԴ) ստեղծվել է 2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից շուրջ կես տարի անց՝ 2002 թ. փետրվարի 19-ին՝ Միացյալ Նահանգների ներսում ռազմական հակահետախուզական գործունեության համակարգվածության և ընդհանրապես արդյունավետության բարձրացման, ահաբեկչության դեմ պայքարի ակտիվացման նպատակներով: Համաձայն փաստաթղթի 3-րդ («Առաքելությունը») ենթագլխի, «ՕՀՀԴ-ի առաքելությունն է ԱՄՆ պաշտպանության նախարարության հակահետախուզական ծրագրերի ու գործունեության իրականացումն ու ղեկավարումը, որոնք ապահովում են գերատեսչության, նրա անձնակազմի, ռեսուրսների, տեղեկատվության, զարգացման ծրագրերի, տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների, տնտեսական անվտանգության և ընդհանրապես ԱՄՆ շահերի պաշտպանությունն ու անվտանգությունը արտաքին ազդեցություններից ու մանիպուլյացիաներից: Դեպարտամենտի նպատակներից է նաև երկրի պաշտպանական գերատեսչության նկատմամբ իրականացվող լրտեսական գործունեության հայտնաբերումն ու չեզոքացումը»:

ՕՀՀԴ-ն բաղկացած է ոլորտում մասնագիտացած հետևյալ հակահետախուզական բազմագործառութային վարչություններից ու կենտրոններից, որոնք իրականացնում են համապատասխան տեղեկատվության հավաքագրում, տեղեկատվության և գործողությունների գնահատում և վերլուծում, մշակում հակահետախուզական սպառնալիքներին համարժեք արձագանքման ու հակազդման ծրագրեր: «ԱՄՆ պաշտպանության նախարարության Օպերատիվ հակահետախուզության դեպարտամենտ» փաստաթղթի 5-րդ՝ «Դեպարտամենտի կառուցվածքը» ենթագլխի 5,1/5,2 կետերում մասնավորապես սահմանվում է հետևյալ կառուցվածքային կազմը՝

- Դեպարտամենտի տնօրինություն/Director
- Հակահետախուզական սպառնալիքների գնահատման միացյալ վարչություն/The Joint Counterintelligence Evaluation Office-JCEO
- Ռազմական հակահետախուզության ուժային աջակցման խումբ/The Defense Counterintelligence Force Protection Response Group - FPRG
- Հակահետախուզության միացյալ վերլուծական խումբ/The Joint Counterintelligence Analysis Group-JCAG
- Ռազմական հակահետախուզության տեղեկատվական համակարգի ծրագրի վարչություն/The Defense Counterintelligence Information System (DCIIS) Program Office
- Հակահետախուզության միացյալ ուսումնական ակադեմիա/The Joint Counterintelligence Training Academy - JCITA.

Նախատեսվում է, որ Օպերատիվ հակահետախուզական դեպարտամենտը ոլորտի արդյունավետության ապահովման նպատակներով պետք է սերտորեն համագործակցի Պենտագոնի ենթակայության տակ գործող այլ ռազմական դեպարտամենտների ու կենտրոնների հետ, որոնց ընձեռած աջակցությունը կրելու է սպասարկող բնույթ: Ինչպես սահմանվում է սույն հակահետախուզական դեպարտամենտի գործունեությունը իրավակարգող փաստաթղթում, վերջինիս աջակցություն են ցուցաբերում ԱՄՆ Շտաբների հրամանատարների միացյալ հանձնաժողովի նախագահը (The Chairman of the Joint Chiefs of Staff-CJCS)՝ ապահովելով այսպես կոչված մարտական աջակցության ուղեցույց, Պենտագոնի ներսում գործող

պաշտպանական դեպարտամենտների քարտուղարությունները՝ նպաստելով ռազմական հակահետախուզական ծրագրերի իրականացմանն ու ինտեգրմանը Պենտագոնի բոլոր ենթակառուցվածքներում: ՕՀՀԴ-ին լուրջ մասնագիտական աջակցություն է տրամադրում նաև վերջերս ստեղծված Ռազմական հակահետախուզության գործակալությունը (Defense Intelligence Agency)՝ հիմնականում շեշտադրելով այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են համընդհանուր (նաև քաղաքացիական) հակահետախուզության կենտրոնացման, արդյունքների և ռազմական համատեղ գործողությունների պահանջների համակարգման հարցերի ինտեգրումը ՕՀՀԴ-ի համապատասխան գործառույթների հետ[1]:

Փաստաթղթում տեղ գտած ձևակերպումները ևս մեկ անգամ վկայում են, որ ԱՄՆ Պենտագոնի ՕՀՀԴ-ի հակահետախուզական գործունեությունը էապես կարևորվում է ոչ միայն երկրի պաշտպանական գերատեսչության, այլև Սպիտակ տան կողմից: Դա են հաստատում նաև մամուլում տեղ գտած հրապարակումներն այն մասին, որ վերջին շրջանում էապես ընդլայնվել են ՕՀՀԴ-ի իրավասությունները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ռազմական և տնտեսական լրտեսության, ինչպես նաև պետական դավաճանության դեպքերի հետաքննությունը, մուտքի արտոնագրի ապահովությունը Միացյալ Նահանգների ներքին անվտանգության կառույցների հաշվետվությունների մատչելիության առումով, ինտերնետային մոնիթորինգի ասպարեզում հակահետախուզական գաղտնազերծված գործունեության մեծացումը, ահաբեկչության դեմ պայքարը և այլն:

Ռազմական հետախուզության գործողությունների միացյալ կենտրոն / Defense Joint Intelligence Operations Center-DJIOC

2006 թ. ապրիլին Ռազմական հետախուզության գործակալությունը հիմնեց Ռազմական հետախուզական գործողությունների միացյալ կենտրոնը (ՌՀԳՄԿ): Կենտրոնը գործում է 1987 թ. հիմնադրված ԱՄՆ Ռազմական հետախուզության վերլուծական կենտրոնի շրջանակներում, որը և տեղակայված է Վաշինգտոնի «Բոլլինգ» օդուժի ռազմակայանում: Կենտրոնի հիմնադրման կոնցեպտուալ հիմքերը վերագրվում են դեռևս 2003 թ. երկրի պաշտպանության գերատեսչության ղեկավարության կողմից այսպես կոչվող «Ռազմական հետախուզության վերամոդելավորում» նախաձեռնությանը, որի նպատակն էր բարելավել ռազմական գործողություններին ցուցաբերվող ռազմական հետախուզության աջակցությունը: Նորաստեղծ ինստիտուտի առաքելությունն է ԱՄՆ ազգային անվտանգությանը ներկայացող միջազգային սպառնալիքների ուղղությամբ ռազմական հետախուզության ռեսուրսների ողջ սպեկտրի ինտեգրում/միավորումը և ռազմական հետախուզության գործունեության շերտերի համատեղման ուժեղացումը: ՌՀԳՄԿ-ի գերակա գործառույթներից մեկն էլ վերաբերում է Միացյալ Նահանգների հետախուզության/հակահետախուզության քաղաքացիական և ռազմական ինստիտուտների և կենտրոնների միջև առկա մրցակցային անհամաձայնության մթնոլորտի հաղթահարմանը, որը ի վերջո կհանգեցնի ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Կենտրոնի հիմնադրման փաստաթղթում սահմանված նպատակների շարքում առանձնացվում էր նաև ԱՄՆ պաշտպանության գերատեսչության շրջանակներում համապատասխան անկախ հետախուզական կենտրոնների, ռազմական հրամանատարական խմբի ստեղծման անհրաժեշտությունը, որոնք ի վիճակի կլինեն միավորելու Պաշտպանության նախարարության հետախուզության բոլոր գործառույթները և դիսցիպլինները: Հետախուզական կենտրոնի գործունեության արդյունավետության ապահովման հարցում էապես կարևորվում էր ոլորտում համարժեք կադրային ռազմավարության մշակումը, համապատասխան վերլուծաբանների ու տեղեկատվական մասնագետների ընտրության հարցը: Միացյալ Նահանգների ռազմական հետախուզության բարձրաստիճան պատասխանատուների հավաստիացումներով, առաջիկա կես տասնամյակում նորաստեղծ կենտրոնի գերխնդիրը հետախուզական գործողությունների միացյալ կենտրոնների հիմնադրումն է աշխարհի տարբեր հատվածներում, որոնք կապահովեն 21-րդ դարի ռազմական/պաշտպանական

պահանջներին ու մարտահրավերներին համարժեք արագ ընկալման, վերլուծման ու արձագանքման խնդիրների արդյունավետ իրագործումը (կենտրոններից մեկի բացումը տեղի ունեցավ 2007 թ. հունվարի 25-ին Քաբուլում):

Հետախուզության, դիտորդման և հետախուզման միացյալ գործառութային շտաբ / Joint Functional Component Command for Intelligence, Surveillance and Reconnaissance

Հետախուզության, դիտորդման և հետախուզման (օդային կամ տիեզերական հետախուզություն) միացյալ գործառութային շտաբը (այսուհետ՝ ՀԴՀ ՄԳԾ), որը հիմնադրվել է միայն վերջերս՝ 2005 թ. մարտին, գործում է ԱՄՆ պաշտպանության նախարարության թվով 10 ռազմական միացյալ շտաբներից մեկի՝ ԱՄՆ Ռազմավարական շտաբի (U.S. Strategic Command) ենթակայության ներքո և տեղակայվում է Ռազմական հետախուզության գործակալությանը կից: ՀԴՀ ՄԳԾ-ն բաղկացած է հետևյալ 4 ենթակառուցվածքներից՝ Գործողություններ, Նախագծեր ու ռազմավարություններ, Գնահատման համակարգ և Հատուկ գործունեություն:

ՀԴՀ ՄԳԾ-ն սերտորեն համագործակցում է ռազմական հետախուզական գործողությունների միացյալ կենտրոնի հետ այնպիսի ոլորտներում, ինչպիսին են, օրինակ, հետախուզության/հակահետախուզության մարտահրավերների ու ռիսկերի, առկա ռեսուրսների համակարգումն ու կառավարումը[2] Միացյալ գործառութային շտաբի գործառույթների շրջանակներում է նաև Միացյալ Նահանգների հետախուզության, դիտորդման ու հետախուզման ռազմական շտաբներին (Combatant Command) համապատասխան տեղեկատվական ռեսուրսների մոնիթորինգի ու տեղեկատվության տրամադրումը: Իսկ ավելի ստույգ, Միացյալ շտաբը իրենից ներկայացնում է ԱՄՆ-ի հետախուզության, դիտորդման ու հետախուզման գործողությունների ու ռազմավարության նախագծման, գնահատման և իրականացման հիմնական կենտրոնակայանը: Հետախուզական գործողությունների նախագծումը ենթադրում է պոտենցիալ ռիսկերի ու մարտահրավերների գնահատում և վերջիններիս մեղմացման ու ոչնչացման համար համարժեք սցենարների ռազմավարացում ու իրականացում: ՀԴՀ ՄԳԾ-ի հետախուզական գործառույթներից կարելի է առանձնացնել նաև ԱՄՆ-ի հետախուզության հանրության քաղաքացիական ու ռազմականացված ստորաբաժանումների միջև առկա գործողությունների համակարգման ու կոորդինացման խնդիրները:

Միջանձնային հետախուզության վարչություն / Defense HUMINT Management Office-DHMO

ԱՄՆ պաշտպանական գերատեսչության նախաձեռնության համաձայն 2005 թ. Ռազմական հետախուզության գործակալությունը հիմնադրեց Ռազմական միջանձնային հետախուզության վարչությունը (DHMO), որը կոչված էր ապահովելու ռազմական միջանձնային հետախուզության ծրագիրն ու գործողությունների ռազմավարության, մեթոդաբանության ու տեխնոլոգիական հիմնախնդիրների իրագործման գործընթացը[3]: Ռազմական հետախուզության գործակալության ենթակայության ներքո գործող Միջանձնային հետախուզության վարչությունը ոլորտում սպասարկում է երկրի թե՛ քաղաքական և թե՛ ռազմական պատասխանատուներին: Վարչության ենթակայության ներքո գործում է նաև դեռևս սառըպատերազմյան տարիներին հիմնադրված (1965 թ.) Ռազմական ներկայացուցչի համակարգը (Defense Attache System), որը արտերկրում գործող ԱՄՆ շուրջ 135 դիվանագիտական ներկայացուցչություններին տրամադրում է կցված ռազմական ներկայացուցիչներ: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել Ռազմական միջանձնային հետախուզության ենթակայության տակ (ոչ պաշտոնական տվյալներով) գործող հայտնի Ռազմավարական աջակցման դեպարտամենտի (Strategic support branch) գործունեությանը: Ռազմավարական աջակցման դեպարտամենտի (այսուհետ՝ ՌԱԴ) հիմնադրումը վերագրվում է 2005 թ. սկզբներին, այլ աղբյուրների համաձայն՝ ավելի շուտ՝ սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո, 2002 թ. վերջերին: Մասնավորապես դեպարտամենտի հիմնադրումը

կապվում է 2002 թ. ապրիլի վերջին սկիզբ առած հանրահայտ «Project Icon» կոչվող գաղտնի ռազմական հետախուզական ծառայության անվան հետ[4]:

ՌԱԴ գաղտնի ռազմական ծառայությունը, որն անմիջականորեն ենթարկվում է Պենտագոնի ղեկավարին, ստեղծվել է հատուկ ծառայությունների իրականացման նպատակներով: Ծառայության կադրային համակարգում ընդգրկվում են տարբեր մասնագիտացված խմբեր՝ սպայակույտ, լեզվաբաններ, տեխնոլոգներ, ռազմական հետաքննիչներ և այլն: ՌԱԴ-ի ստորաբաժանումները մասնագիտացած են նաև Միացյալ Նահանգների ռազմուժին անմիջական հակառակորդի գործունեության վերաբերյալ տեղեկատվության սպասարկման, ահաբեկչության դեմ պայքարում մեթոդաբանության, ռազմավարության մշակման և նախագծման, ինչպես և գործակալների հավաքագրման ասպարեզներում: Պաշտոնապես չհաստատված, ԱՄՆ ռազմական հետախուզության տեղեկատվական գաղտնազերծված արտահոսքերի վրա հիմնված աղբյուրների համաձայն, ՌԱԴ-ի հատուկ ստորաբաժանումները գործունեություն են ծավալել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ինդոնեզիան, Ֆիլիպինները, Եմենը, սադդամյան Իրաքը, Աֆղանստանը, նաև Վրաստանը:

Օրենսդրական/հայեցակարգային փոփոխություններ

Վերջին կես տասնամյակում ԱՄՆ ռազմական հետախուզություն/հակահետախուզությունում տեղ գտած ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացակարգին զուգահեռաբար արձանագրվեցին այդ վերադասավորումները իրավակարգող և ընդհանրապես ոլորտի ողջ սպեկտրի արդյունավետության ապահովմանը կոչված մի շարք օրենսդրական փոփոխություններ ու նորմեր: Մյուս կողմից, իրականացված կառուցվածքային և կոնցեպտուալ-իրավական վերադասավորումները առանցքային նախադրյալ հանդիսացան առաջիկա տարիներին Միացյալ Նահանգների ռազմական հետախուզության ռազմավարության մշակման ու նախագծման համար: Ստորև ներկայացվում են ԱՄՆ ռազմական հետախուզության ոլորտում վերջին տարիներին իրականացված իրավական/օրենսդրական ա-

ռանցքային փաստաթղթերն ու դրանց վերլուծականները:

«Միացյալ և ազգային հետախուզության աջակցումը ռազմական գործողություններին» / Joint and National Intelligence Support to Military Operations

2004 թ. հոկտեմբերի 7-ին հրապարակված «Միացյալ և ազգային հետախուզության աջակցումը ռազմական գործողություններին» խորագիրը կրող փաստաթուղթը հանդիսանում է վերջին կես տասնամյակում Միացյալ Նահանգների ռազմական հետախուզությունում իրականացված հիմնարար օրենսդրական ակտերից մեկը: Փաստաթուղթը կարևորվում է նաև այն առումով, որ այն հանդիսանում է Միացյալ Նահանգների զինված ուժերի հիմնական զորատեսակների՝ Բանակի, Ռազմաօդային և Ռազմածովային ուժերի, Ծովային հետևակի կորպուսի, Առափնյա պահպանության, ինչպես նաև Շտաբների հրամանատարների միացյալ հանձնաժողովի (Joint Chiefs of Staff) համատեղ արդյունքը: Փաստաթուղթը, որը մշակվել է Շտաբների հրամանատարների միացյալ հանձնաժողովի ղեկավարի անմիջական գլխավորության ներքո, Միացյալ Նահանգների զինված ուժերի միացյալ գործողությունները համակարգող, նրանց միջև փոխհամագործակցության հարցերը կոորդինացնող թվով չորրորդ հայեցակարգային հրապարակումն է (նախորդ հրապարակումները թվագրվում են 1996, 1998 և 2000 թթ.): Փաստաթղթում շարադրված են ռազմական, ինչպես նաև ազգային հետախուզության գործունեության, մեթոդաբանության ու ռազմավարության հայեցակարգային դրույթներն ու սկզբունքները, որոնք կոչված են աջակցելու ռազմական գործողություններին: Հանգամանորեն ներկայացված են ռազմական հետախուզության համատեղ զորատեսակների և ընդհանրապես հետախուզական հանրության գործառութային կառուցվածքը, պարտականություններն ու փոխհամագործակցության սկզբունքները:

Ստորև ներկայացված են «Միացյալ և ազգային հետախուզության աջակցումը ռազմական գործողություններին» հայեցակարգային փաստաթղթի այն հիմնական շեշտադրումները, որոնք կապահովեն վերջինիս ընդհանուր, բայց

և բովանդակային և իմաստային առումով՝ համալիր լուսաբանումը:

• ***Հետախուզության դերը ռազմական գործողություններում*** - Միացյալ հետախուզության կազմակերպություններն ու կենտրոնները կրում են անմիջական պատասխանատվություն՝ ռազմական գործողություններ իրականացնող ստորաբաժանումներին/շտաբներին և դրանց կից միացյալ զորքերին տրամադրելու ընդհանուր, կոորդինացված հետախուզական քարտեզագրում՝ միավորելով ազգային և սցենարային (խմբ.՝ Theater intelligence) հետախուզության/հակահետախուզության տեղեկատվությունը և գնահատման մեխանիզմները: Հետախուզության ընթացակարգը ենթադրում է համակարգված 6 դիսցիպլինների հաջորդական շղթա, որը ներառում է.

- հետախուզության նախագծում և ուղղորդում,
- տեղեկատվության հավաքագրում,
- գործընթացի իրականացում,
- վերլուծություն և արդյունքի ստացում,
- տարածում և համակարգում,
- գնահատում և հետադարձ կապ:

Ռազմական գործողություններում հետախուզության դերը դառնում է անգնահատելի հատկապես Միացյալ Նահանգների առջև ծառացած 21-րդ դարի մարտահրավերների ու ռիսկերի բազմազանության, ենթաշերտավորվածության և վերջիններիս ընկալման-հակազդման մեխանիզմների բարդացման պայմաններում: Մյուս կողմից, ռազմական գործողությունների ժամանակ հետախուզության գործառույթների շրջանակներում է հակառակորդի ռազմական կարողությունների, նշանակետերի և գործողությունների պոտենցիալ ուղղությունների ու կենտրոնների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումն ու նախագծումը, ինչը թույլ է տալիս առավել ընդգրկուն և ճշգրիտ պատկերացնել հակառակորդի հնարավորություններն ու թերությունները, գնահատել սեփական ռեսուրսները, համարժեք նախագծել առաջիկա գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը:

• ***Միացյալ հետախուզական կազմակերպությունների կառուցվածքը, պարտականությունները / Joint Intelligence Organizations, Responsibilities***[5] - Միացյալ հետախուզության (խմբ.՝ նկատի է առնվում ԱՄՆ զինված ուժերի բոլոր զորատեսակների հետախուզությունը) գործողությունների նպատակը ռազմական և ազգային հետախուզության հանրությունների ու նրանց գործառույթների միավորումն ու կոորդինացումն է, որը թույլ կտա շրջանցել մասնակի գործողությունների իրականացումը և դրանով իսկ ապահովել ռազմական գործողությունների պատասխանատուներին տեղեկատվությամբ և ժամանակային առումով առավել ճշգրիտ հետախուզությամբ:

ա/ Ռազմական շտաբ (J-2) - J-2 ռազմական շտաբը աջակցում է տվյալ շտաբի հրամանատարին ու նրա անձնակազմին ռազմավարության մշակման, սցենարային (խմբ.՝ theater) արշավների նախագծման, սցենարային հետախուզությունում հրամանատարական համագործակցության համակարգման գործառույթներին: J-2-ը իր հետախուզական ծառայությունները տրամադրում է ռազմական բարձրաստիճան պատասխանատուներին և նրանց կից ստորաբաժանումներին՝ նպատակ ունենալով ներկայացնել համընդհանուր, կոորդինացված հետախուզության քարտեզագրում:

բ/ Ռազմական շտաբների միացյալ հետախուզական կենտրոն (ՌՇ ՄՀԿ) - ՌՇ ՄՀԿ-ն հանդիսանում է ռազմական շտաբների հետախուզական վերլուծությունների ու արդյունքների ստացման կենտրոնական/առանցքային ստորաբաժանումներից մեկը: Յուրաքանչյուր ռազմական շտաբի հետախուզական գործառույթների արդյունավետության ապահովման նպատակներով վերջինիս ենթակայության ներքո գործում է համապատասխան ՄՀԿ կամ նման մի կառույց (օր.՝ ԱՄՆ Եվրոպական շտաբին/U.S. European Command կից գործում է Միացյալ վերլուծական կենտրոնը, իսկ ԱՄՆ Հյուսիսային շտաբում/U.S. Northern Command՝ Միացյալ հետախուզության և միավորման կենտրոնը): Յուրաքանչյուր ՌՇ ՄՀԿ հետախուզական ռեսուրսների անբավարարվածության դեպքում շտաբի հրամանատարության հետախուզական պահանջների բավարարման նպատակով կարող է դիմում ներկայացնել Ազգային ռազմական միացյալ հետախուզական կենտրոնին (National military joint intelligence center) կամ կից այլ շտաբին՝ կիրառելով հետախուզական հանրության on-line

հետախուզության տեղեկատվական շտեմարանը[6]:

գ/ *Ենթադաս միացյալ զորքեր J-2 (ԵՄՋ)* - J-2 ԵՄՋ-ը պատասխանատու են Միացյալ զորքերի հրամանատարների/Joint Force Commanders անունից ամբողջական հետախուզության ընթացակարգի նախագծման ու ուղղորդման գործառույթների իրականացման համար:

դ/ *Ենթադաս միացյալ զորքերի J-2 հակահետախուզության և միջանձնային հետախուզության (J-2X) ստորաբաժանում* - Ստորաբաժանումը իրականացնում է հակահետախուզության և միջանձնային հետախուզության գործողությունների համակարգման գործընթացը, պատասխանատու է այդ թվում և միջանձնային հետախուզության և հակահետախուզության տվյալների հավաքագրման, համակարգման ու կոորդինացման խնդիրների համար:

• ***Հետախուզական գործողություններ*** - Հետախուզությունն աջակցում է միացյալ ռազմական գործողություններին (Joint Operations)՝ ռազմական բարձրաստիճան հրամանատարության ու ստորադաս զորքերին ու սպայակույտին ապահովելով անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությամբ ու համարժեք արդյունքներով: Հետախուզության ընթացակարգը բաղկացած է հետախուզական գործողությունների լայնընդգրկուն և ենթաշերտավորված ու փոխկապակցված սպեկտրից: Հետախուզական գործողությունները և նրա դիսցիպլինները (թվարկված վերևում) կենտրոնանում են հրամանատարության առաքելության կամ նպատակների և բուն գործողությունների հայեցակարգի խնդիրների շուրջ: Հետախուզական գործողությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ընթացակարգը սահմանող դիսցիպլինների, ինչպես և համակարգող ենթակառուցվածքների միջև գոյություն չունեն գործառութային և ժամանակային բաժանարար գծեր, դրանք ներկայանում են որպես ամբողջական համակարգի փոխլրացնող բաղադրիչներ:

Հետախուզության գործընթացի կառուցվածքը



• ***Հետախուզության աջակցում միացյալ գործողությունների նախագծմանը / Intelligence Support to Joint Operation Planning*** - Ռազմական գործողությունների արդյունավետության ապահովման, ինչպես և ճշգրիտ տեղեկատվության հավաքագրման ու վերլուծման հարցում զգալի է մասնավորապես հետախուզության ցուցաբերած աջակցությունը գործողությունների նախագծման խնդիրներին: Ռազմական միացյալ գործողությունների նախագծման գործընթացներին հետախուզությունն աջակցում է ռազմավարական և/կամ մարտավարական տարբեր մեթոդաբանություններից ելնելով.

- *ռազմավարական ուղղորդում*, երբ հիմնականում կենտրոնանում են երկարաժամկետ, նաև միջնաժամկետ նպատակակետերի և դրանց լուծման ուղղությունների շուրջ.
- *իրավիճակային ուղղորդում*, երբ ռազմական գործողությունների իրականացման համար առաջնակարգ նշանակություն են ստանում իրադրության վերաբերյալ համապատասխան հետախուզական գործընթացի ստացման հարցերը: Իրավիճակային ուղղորդումն իրենից ներկայացնում է նախագծման առավել ճկուն,ադապտացվող և խիստ փոփոխական մեթոդ.
- *ճգնաժամի գնահատում*, երբ ռազմական գործողությունների գործընթացին զուգահեռ ստեղծվում է ճգնաժամային իրադրություն, որի դեպքում հետախուզության նախագծման այդ մեթոդը նպաստում է ռազմական գործողությունների հետագա կիրառության, դրա ուղղությունների ճշգրիտ տեղեկատվության ու արդյունք ստանալու համար.
- *գործողությունների զարգացման կուրս*, երբ հետախուզության ոլորտում համապատասխան վերլուծություններ ու գնահատման աշխատանքներ են իրականացվում՝ ռազմական հրամանատարության կողմից ռազմական գործողությունների իրականացման ուղղությունների սահմանման վերաբերյալ.
- *զարգացում և նախագծում*. վերջինս նախաձեռնվում է, երբ երկրի նախագահը կամ պաշտպանության նախարարը հաստատում է ռազմական գործողությունների զարգացման կուրսը: Ստացված տեղեկությունների ճշգրտման ու հաստատման աշխատանքներից հետո հաջորդում է ռազմական գործողությունների նախագծման գործընթացը.
- նախագծման վերջնական պատկերը ամփոփում է Շտաբների հրամանատարների միացյալ հանձնաժողովի ղեկավարը, որին և հաջորդում է նպատակահարմարության պարագայում համարժեք հրամանի արձակումը:

«Միացյալ հետախուզություն» / Joint Intelligence-Joint Publication 2-0

2007 թ. հունիսի 22-ին հրապարակվեց ԱՄՆ զինված ուժերի այսպես կոչված «Միացյալ հետախուզություն» հայեցակարգային փաստաթուղթը, որում ներկայացված հիմնադրույթներն ու տեսլականները, ըստ էության, կրում են նախորդ՝ «Միացյալ և ազգային հետախուզության աջակցումը ռազմական գործողություններին» հայեցակարգի ընդհանրացված նկարագիրը: Սակայն նորաստեղծ փաստաթղթում առկա են որոշ կոնցեպտուալ հասկացություններ, ռազմավարական որոշակի ուղենիշներ, որոնք տեղ չեն գտել նախորդ փաստաթղթում, և այդ տեսանկյունից նպատակահարմար է ստորև կենտրոնանալ հենց այդ հիմնախնդիրների շուրջ: Նախորդ փաստաթղթի նկատմամբ «Միացյալ հետախուզության» առավելություններից մեկն էլ այն է, որ այն տալիս է վերջին 2 տարիների ընթացքում Միացյալ Նահանգների հետախուզական/հակահետախուզական ձեռքբերումների ու բացթողումների տեսական, հայեցակարգային առավել կատարելագործված տարբերակը:

• ***Հետախուզության արդյունքների դասակարգում*** - Միացյալ հետախուզության գործընթացի հիմնախնդիրների մասին խոսելիս անհրաժեշտաբար հարկ է անդրադառնալ նաև հետախուզության արդյունքների դասակարգման մեթոդաբանությանը: Այսպես, համաձայն սույն ռազմական հայեցակարգի, հետախուզության արդյունքները հիմնականում դասակարգվում են հետևյալ թվով յոթ կատեգորիաների.

- Ցուցումներ և նախազգուշացում/indications and warning. այս կատեգորիան ուղղակիորեն առնչվում է այն հիմնական արտաքին գործոններին ու զարգացումներին, որոնք

կարող են սպառնալիք ներկայանալ Միացյալ Նահանգներին կամ նրան դաշնակից ռազմական ուժերին, ԱՄՆ քաղաքական ու տնտեսական շահերին կամ արտերկրում նրա քաղաքացիներին: «Ցուցումներ և նախազգուշացում» կատեգորիան ենթադրում է հակառակորդի մտադրությունների կամ գործողությունների, Միացյալ Նահանգների կամ դաշնակից երկրների նկատմամբ միջուկային սպառնալիքների և ահաբեկչական գործողությունների վերաբերյալ նախազգուշացնող գործառույթներ:

- Ընթացիկ հետախուզություն/current intelligence, որն ընթացիկ կամ օպերատիվ աջակցություն է ցուցաբերում ռազմական գործողություններին, նրա տարբեր ուղղություններում:

- Հիմնական ռազմական հետախուզություն/general military intelligence. այս կատեգորիան կենտրոնանում է արտերկրյա կազմակերպությունների ռազմական ռեսուրսների ու կարողությունների և այն հարցերի շուրջ, որոնք կարող են պոտենցիալ մարտահրավեր կամ վտանգ պարունակել ԱՄՆ ռազմական գործողություններին: Որպես կանոն, այս կատեգորիան իրենից ներկայացնում է համեմատաբար լայնընդգրկուն ուղղություն և հիմնականում վերաբերում է երկարաժամկետ նախագծման հիմնախնդիրներին:

- Նպատակային կամ թիրախային հետախուզություն/target intelligence. այս կատեգորիան վերաբերում է թիրախների կամ նշանակետերի ընտրման ու գերակայման գործընթացներին՝ ընտրված թիրախներին համարժեք արձագանքման նպատակներով: Կատեգորիան ենթադրում է հակառակորդի անձնակազմի, ստորաբաժանումների, տեղակայման, համակարգերի և այլ անհրաժեշտ հետախուզական տվյալների համալիր վերլուծությունների շարք:

- Գիտական և տեխնիկական հետախուզություն/scientific and technical intelligence. գիտական և տեխնիկական հետախուզությունը վերաբերում է հիմնարար և կիրառական գիտությունների ու տեխնոլոգիաների ոլորտում արտաքին գործոններին ու զարգացումներին՝ բախվելով պոտենցիալ միջուկային համակարգերի հետ ու տալով վերջիններիս և դրանց ասոցիացված նյութերի ու համակարգերի գիտական ու տեխնոլոգիական բնութագրերը, առանձնահատկությունների ու կարողությունների վերլուծականները:

- Հակահետախուզություն/counterintelligence. հակահետախուզության կատեգորիան վերլուծում է արտաքին հետախուզությունների ու անվտանգության ծառայությունների, ինչպես և մասնավոր կազմակերպությունների (ոչ պետական) հետախուզության կարողությունները:

- Գնահատման հետախուզություն/estimate intelligence. իրականացվում են համապատասխան գնահատումներ, որոնք կանխատեսում են տվյալ իրադրության զարգացման հնարավոր սցենարները և այդ համատեքստում ռազմական գործողությունների նախագծման ու իրականացման գործառույթները:

• ***Պատերազմների մակարդակները / levels of wars*** - համաձայն փաստաթղթի, պատերազմների մակարդակները ենթադրում են հետախուզական գործողությունների համարժեք մակարդակներ, որոնք երեքն են.

ա/ ռազմավարական հետախուզություն, որը բաղկացած է երկու կատեգորիաներից՝ ազգային ռազմավարական հետախուզություն (կիրառվում է ազգային ռազմավարության և քաղաքականության մշակման, միջազգային իրադրության վերլուծման, ռազմական և ռազմավարական սպառնալիքների մոնիթորինգի նպատակներով) և սցենարային ռազմավարական հետախուզություն (theater strategic intelligence): Վերջինս աջակցում է միացյալ ռազմական գործողություններին, սահմանում հակառակորդի ընթացիկ և հեռանկարային ռազմական կարողություններն ու ռեսուրսները, որոնք կարող են ազդել կամ վտանգել ԱՄՆ և նրան դաշնակից ռազմական ուժերին:

բ/ օպերատիվ հետախուզություն, որը հիմնականում կենտրոնանում է հակառակորդի ռազմական օպերատիվ կարողությունների ու մտադրությունների հիմնահարցերի շուրջ.

գ/ տակտիկական հետախուզություն, որը շեշտադրում է գլխավորապես մարտական հետախուզության խնդիրները՝ հրամանատարների, նախագծող անձնակազմի կողմից ճակատամարտերի և հատուկ գործողությունների նախագծման ու իրագործման նպատակներով:

• ***Հետախուզության հավաստիություն / Intelligence confidence levels*** - Հետախուզության արդյունավետության ապահովման առանցքային երաշխիքներից մեկն էլ վերաբերում է հետախուզության գործընթացի (տվյալների/տեղեկատվության հավաքագրում, վերլուծում, գնահատում և փոխանցում) արդյունքների հավաստիության խնդրին: Այդ նպատակների իրականացմանն է ծառայում հետախուզության հավաստիության մակարդակները սահմանող նախագծի մշակումը: Հետախուզությունը կարող է հիմնվել հետազոտված փաստերի, կամ որոշ գիտելիքների բազայի վրա ձևավորված եզրահանգումների, կամ էլ գնահատումների վրա: Ռազմական գործողությունների պատասխանատուների հետախուզական գործառույթների և հետախուզության գործընթացից ստացված արդյունքների փոխշփման կարևորագույն հարցերից մեկը վերաբերում է այդ արդյունքների ստացված բազայի հավաստիության հաստակեցման հարցը: Ստորև ներկայացված է մի աղյուսակ, որը պատկերում է հետախուզության հավաստիության մակարդակները՝ ըստ հետախուզական արդյունքների հավաստիության տոկոսային հարաբերակցության.

«Ռազմավարական ծրագիր, 2007-2012 թթ.»

Վերջերս ԱՄՆ-ի Ռազմական հետախուզության գործակալության (ՌՀԳ) կողմից հրապարակվեց «Ռազմավարական ծրագիր, 2007-2012թթ.» փաստաթուղթը, որտեղ սահմանվում են նշված ժամանակահատվածում Միացյալ Նահանգների Ռազմական հետախուզության գործակալության ռազմավարական ու տակտիկական նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ռազմական հետախուզության հանրությունում գործառութային, տեղեկատվական կոորդինացման հարցերը: Փաստաթղթում լրջագույն ուշադրություն է դարձվում առաջադրված առաքելությունների իրագործման գործում հետախուզության տարբեր գործառույթներում բարձրակարգ մասնագիտացում ունեցող կադրերի հավաքագրման հիմնահարցերին՝ որպես ոլորտի արդյունավետության բարձրացման կարևորագույն երաշխիքներից մեկի:

Ռազմական հետախուզության գործակալությունը, հանդես գալով որպես ռազմական հետախուզական գործողություններին աջակցող առաջատար գործակալություն, իր առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման ու նպատակների իրագործման հարցում կենտրոնանում է 5 առանցքային ռազմավարական գործողությունների շուրջ.

1. ստեղծել ճկուն, հեռատես կազմակերպություն, որն ի վիճակի կլինի ապահովել ԱՄՆ ռազմական գործողությունների պատասխանատուներին հետախուզության համապատասխան գործառույթներով,
2. ուժեղացնել մարդկային, վերլուծական և տեխնոլոգիական ռեսուրսներն ու կարողությունները՝ հետախուզական տեղեկատվության հավաքագրման ու վերլուծման հարցում հակառակորդին գերազանցելու նպատակով,
3. աջակցել ԱՄՆ հետախուզական հանրության մարմինների կոնսոլիդացմանը՝ տվյալների, տեղեկատվության բաշխման հարցում հավասարազոր/միասնական մուտքի ապահովման նպատակով,
4. ամրապնդել, զարգացնել հետախուզության մարդկային ռեսուրսները՝ ճշգրիտ ու բարձրակարգ հմտություններ և ունակություններ ապահովելու նպատակով,
5. ստեղծել բարձրակարգ, արդիական համալիր մարդկային, տեխնիկական և ֆինանսական աջակցման համակարգեր՝ ռեսուրսների սպեկտրի ընդլայնման համար:

Ստորև ներկայացված են ՌՀԳ «Ռազմավարական ծրագրի» հիմնական նպատակները.

• ***Ռազմական հետախուզության հանրության տրանսֆորմացում*** - *ՌՀԳ-ն կիրառելու է Ռազմական հետախուզության գործողությունների միացյալ կենտրոնը՝ հետախուզական գործունեության գնահատման, նախագծման և իրականացման գործընթացների՝ հետախուզության գործակալությունների շրջանում սինխրոնիզացման նպատակով: Ռազմական հետախուզության գործողությունների միացյալ կենտրոնը կձևավորի միասնական, փոխհամաձայնեցված համագոր-*

ծակցության հիմքեր ազգային և ռազմական հետախուզական գործակալությունների, Շտաբային հետախուզական միացյալ գործողությունների կենտրոնների, ռազմական հետախուզության վերլուծական ու հավաքագրման ենթակառուցվածքների ու Հետախուզության, դիտորդման և հետախուզման միացյալ գործառութային շտաբի (վարչություն) և այլ հետախուզական ծառայությունների միջև: Նախատեսվում է նաև ձևավորել Հետախուզության գործողությունների նախագծման (ՀԳՆ) ռեսուրսների/կարողությունների ողջ սպեկտրը: Ռազմական հետախուզության գործակալությունը կաջակցի ՀԳՆ ընթացակարգին՝ իդենտիֆիկացնելու, նախագծելու և կիրառելու ռազմական և ազգային հետախուզության ողջ կարողությունները քաղաքականության, ռազմավարական, օպերատիվ և թիրախային նպատակակետերի նկատմամբ:

• **Գալիք սերնդի հավաքագրման (հետախուզական տեղեկատվության) կարողությունների ձեռք բերում** - ՌՀԳ-ն նախատեսում է զարգացնել պաշտպանության գերատեսչության ինֆորմացիայի հավաքագրման համակարգի նախագծումն ու կառավարումը՝ էապես կարևորելով հատկապես Միջանձնային հետախուզության դիսցիպլինը (HUMINT) և ասոցիացված նորագույն հավաքագրման ռազմավարությունները: Գործակալությունը կարող է ընդլայնել իր կարողությունները Միջանձնային հետախուզության ուժեղացման ու համակարգման միջոցով: Այս և այլ հավաքագրման գործընթացի իրագործման համար կարևորվում է ԱՄՆ կառավարական գործակալությունների ռազմական գիտական և տեխնոլոգիական հետախուզության կարողությունների ու ռեսուրսների կիրառումը: ՌՀԳ-ն հավաքագրման ռազմավարության արդյունավետության ապահովման համար շեշտադրում է նաև հակահետախուզության հավաքագրման ու վերլուծման համակարգերի գործառույթների բարելավման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն Ռազմական հետախուզության հանրության և նրա զինված ուժերի անվտանգության ապահովմանը:

• **Համապատասխան հետախուզության տրամադրումը համապատասխան պատվիրատուին ճշգրիտ ընտրված ժամկետում** - ՌՀԳ-ն հստակ ձևակերպված ռեսուրսային ողջ սպեկտրի վերլուծական պարտականությունների իրականացման հանձնարարականներ է ներկայացրել Համընդհանուր ռազմական հետախուզության ծրագրի և ՌՀԳ Ռազմական հետախուզության ծրագրի շրջանակներում գործող ռազմական հետախուզության վերլուծական կազմակերպություններին ու կենտրոններին: Գործակալությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Ռազմական հետախուզության հանրությունում գործող վերլուծական գործառույթների ու պրակտիկայի բարելավման, վերլուծական խմբերի ձևավորման, համապատասխան վերլուծական նախագծերի ու ծրագրերի զարգացման, ինչպես նաև երկարաժամկետ ռազմավարական հետազոտությունների իրականացման խնդիրներին:

• **Բարձրակարգ կադրերի ներքաշում, զարգացում և պահպանում**[7] - ՌՀԳ կադրային բազան պետք է ստեղծի գնալով աճող դինամիկ, միջգործառութային և թիմային միջավայր: Գործակալությունը աշխատանքի է տեղավորում բարձրակարգ որակավորման, հնտելեկտուալ բազմագործառութային մասնագետների, որոնք ունեն համապատասխան գիտելիքների ու հմտությունների պաշար՝ ներառյալ օտար լեզուների ու մշակույթների իմացությունը: Առաջնակարգ նշանակություն է տրվում նաև ընտրված մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով համապատասխան ուսումնական հնարավորությունների ընձեռնման ծրագրերին:

Վերևում ներկայացված փաստաթղթերը հիմնականում դասվում են 21-րդ դարում Միացյալ Նահանգների ռազմական հետախուզությունում իրականացված հիմնարար իրավական և հայեցակարգային բարեփոխումներին ու նորմերին: Բացի դրանցից, վերջին տարիներին ԱՄՆ ռազմական հետախուզության պատասխանատուների կողմից հանրությանն են ներկայացվել նաև այլ՝ վերևում չհիշատակված փաստաթղթեր, որոնց զգալի մասը կրում է հիմնարար հայեցակարգերին լրացնող, ասոցիացված փաստաթղթի կամ ծրագրի կարգավիճակ: Դրանից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում ուղղակի թվարկել ձեռքի տակ եղած նման փաստաթղթերը: Այսպես, 2006 թ. ապրիլին լույս տեսավ Գլխավոր ռազմական հետախուզության ծրագրի (General Defense Intelligence Program) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական ծրագիր. 2008-2013 թթ.» հայեցակարգային փաստաթուղթը, որտեղ հստակեցվում էին առաջիկա տարիներին ԱՄՆ ազգային և ռազմական հետախուզության ինֆորմացիոն տեխնոլոգիական սպասարկման ռազմավարության հիմնադրույթներն ու նպատակները: Շեշտադրվում էին ԱՄՆ ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ենթա-

կառուցվածքային համակարգի զարգացման, բոլոր հետախուզական կենտրոններին նրա միակենտրոն սպասարկման հարցերը, որոնց շուրջ արդեն այս կամ այն կերպ խոսք եղել է: 2006 թ. փետրվարի 6-ին հրապարակվեց ԱՄՆ պաշտպանության գերատեսչության այսպես կոչված «Քառամյա ռազմական ամփոփ զեկույցը» (Quadrennial defense review report), որտեղ ընդհանուր պաշտպանական ոլորտում ներկայացված վերջին տարիների տեսական ու կիրառական գիտելիքների հիմնավորումներում խոսվում է ա՛յդ թվում և հետախուզական/հակահետախուզական ոլորտի ձեռքբերումների, առաջիկա ծրագրերի մասին:

Միացյալ Նահանգների հետախուզությունում իրականացված վերջին իրավական հիմնարար բարեփոխումների շարքին է դասվում նաև 2004 թ. ընդունված «Հետախուզության բարեփոխումների և ահաբեկչության կանխման ակտը», որը, ինչպես վկայում են նաև ամերիկյան բարձրաստիճան պատասխանատուները, կարելի է համարել 1947 թ. ընդունված ԱՄՆ Ազգային անվտանգության ակտի ընդունումից ի վեր ոլորտում տեղ գտած առաջին խորքային բարեփոխումը: Փաստաթղթում մասնավորապես ներկայացված էին այն առանցքային և ոչ առանցքային ներքին ու արտաքին մարտահրավերներն ու ռիսկերը, որոնք հիմք հանդիսացան ԱՄՆ հետախուզական հանրության կառուցվածքային խորքային վերադասավորումների համար: Նախատեսված բարեփոխումները ունեն կոնցեպտուալ-խորքային նշանակություն, սակայն վերաբերում են թե՛ ԱՄՆ ազգային անվտանգության և թե՛ հետախուզական հանրության (քաղաքացիական ու պաշտպանական) ոլորտներին: Իսկ ավելի վաղ՝ 2002 թ. փետրվարի կեսերին լույս տեսավ ԱՄՆ Պենտագոնի օպերատիվ հակահետախուզության դեպարտամենտի (Counter-intelligence Field Activity-CIFA) ստեղծման ու գործունեության համակարգման մասին փաստաթուղթը, որի մասին վերևում խոսվել է:

Հետևություններ

21-րդ դարում ԱՄՆ հետախուզական հանրությունում, այդ թվում և նրա ռազմական ինստիտուտներում տեղ գտած կառուցվածքային ու իրավական-հայեցակարգային բարեփոխումները կոչված էին բավարարել Միացյալ Նահանգների առջև ծառացած նոր մարտահրավերներին (ահաբեկչություն, միջուկային զենքի տարածում և այլն) համարժեք արձագանքման պահանջները: Այդ խնդիրների կյանքի կոչման համար առաջնակարգ հրատապություն էր ստացել երկրի ռազմական (և ընդհանրապես հետախուզական ողջ հանրության) հանրության գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրը, ինչը և բազմիցս շեշտադրվում էր վերջին հայեցակարգային բարեփոխումներում: Ոլորտի արդյունավետության ապահովման հետ են ուղղակիորեն կապակցված նաև երկրի հետախուզական հանրության կառույցների, ենթակառուցվածքների միջև փոխազդման, փոխհամագործակցության և նրանց գործառույթների համակարգման հիմնահարցերը: Տեղին է հիշատակել, որ Ռազմական հետախուզության վերջին հայեցակարգային փաստաթղթերը մշակվել են ԱՄՆ զինված ուժերի համատեղ գործունեության արդյունքում՝ նպատակ ունենալով դրանց տալ նաև միացյալ կիրառական նշանակություն: Անհրաժեշտ է շեշտել նաև, որ վերջին կես տասնամյակում ԱՄՆ ՀՀ-ում իրականացված բարեփոխումների հիմնական շեշտադրումները կենտրոնացած էին հե՛նց ռազմական հետախուզության հարցերի շուրջ: Ավելի ստույգ, երկրում և հատկապես նրա սահմաններից դուրս ամերիկյան հետախուզություն/հակահետախուզությունում առաջին պլան էր մղվում ոլորտի ռազմական պատասխանատուների գործունեությունը: Ռազմական հետախուզության խորքային վերադասավորումները և՛ս հաստատում են հետախուզության/հակահետախուզության ոլորտում ռազմական ճամբարին Սպիտակ տան կողմից լայն լիազորությունների ընձեռնման իրողության մասին:

---

[1] Ռազմական հետախուզության գործակալությունը, որը հիմնադրվել է 1961 թ. հոկտեմբերի 1-ին, հանդիսանում է ԱՄՆ պաշտպանության նախարարության արտաքին ռազմական հետախուզության գործունեության հիմնական ղեկավար ու համակարգող կառույցը:

[2] Միացյալ շտաբի հետախուզական գործունեությունն իրականացվում է ինչպես ստորջրյա, այնպես էլ ցամաքային ու տիեզերական հետախուզության ոլորտներում:

[3] Միջանձնային հետախուզությունը համարվում է հետախուզական տեղեկատվության հավաքագրման կազմակերպման ու համակարգման գործընթացի հիմնական միջոցառումներից կամ օղակներից մեկը: Առավել հայտնի են նաև այսպես կոչված Չափագրման ու իդենտիֆիկացման հետախուզության, Ազդանշանային հետախուզության, Պատկերագրման հետախուզության (տիեզերքի նկարահանումներ և այլն), Տեխնիկական հետախուզության (միջուկային զենքերի, ռազմամթերքի հարցերով), ինչպես նաև Բաց աղբյուրների հետախուզության (պետական մատչելի ռեսուրսների տեղեկատվություն) դիսցիպլիններ:

[4] Նախագծի նպատակն էր արտերկրում ռազմական գաղտնի հետախուզական գործունեության իրավասությունների ընդլայնումը:

[5] Միացյալ համակարգի մեջ չեն ընդգրկվում ԱՄՆ հետախուզական հանրության ռազմական ինստիտուտները և կենտրոնները, ինչպես նաև նրանց կից գործող ստորաբաժանումները:

[6] Ազգային ռազմական միացյալ հետախուզական կենտրոնը հանդիսանում է ռազմական հետախուզության կողմից միացյալ ռազմական գործողություններին ցուցաբերվող աջակցության խնդիրներում առանցքային կենտրոնը: Վարչականորեն գործելով Շտաբների հրամանատարների միացյալ հանձնաժողովին կից՝ Կենտրոնը մասնագիտացած է միացյալ հետախուզական կենտրոնների հայեցակարգային խնդիրների իրականացման հարցերի շուրջ:

[7] Գործակալության կադրային քաղաքականության հարցերին նվիրված են մի քանի ենթաբաժիններ, որոնց ամփոփ շեշտադրումները ներկայացվում են նշված բաժնում:

ՀՅԴ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՑԻՆՏԵՐՆԻ ԱՆԴԱՄ ԱՅԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Կարեն Խանլարյան

Այս հոդվածի նպատակն է ընթերցողին մատուցել ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները, Սոցինտերնի անդամ սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լեյբորիստական մի քանի կուսակցությունների ծրագրային, պլատֆորմային, մանիֆեստային եւ դեկլարատիվ այլ կարգի փաստաթղթերում արծարծված համապատասխան հասկացությունների հետ համեմատության փորձը:

Ա. «ՄՈՒՏՔ»

Ի տարբերություն մեր նախկին ծրագրերի, 1998 թ. վերամշակված ծրագիրը սկսվում է «Մուտք»-ով, ուր ընդհանուր գծերով բնորոշվում է ՀՅ Դաշնակցության էությունը, գաղափարախոսական ուղղությունը եւ նրա հետապնդած նպատակների ընդհանրությունը:

«Մուտք»-ում ուրվագծվում են ՀՅԴ արժեքային համակարգի քառյակ էատարրերը, գաղափարները կամ աշխարհայացքային մեկնակետերը, որոնց համարկված ամբողջությամբ է իմաստավորվում ՀՅԴ գաղափարաբանությունը: Դրանք են.

- Ազգայնությունը,
- Ընկերվարությունը,
- Ժողովրդավարությունը,
- Հեղափոխականությունը:

«Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր էությամբ, աշխարհայացքով եւ ավանդներով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական եւ հեղափոխական կազմակերպություն է»:

Այս տիպաբանական բնութագրմամբ, «Մուտք»-ը ՀՅԴ-ն ներկայացնում է որպես հայ ազգի «բովանդակ շահերի» պաշտպան: Գաղափարական այս էական սկզբունքը հարազատորեն ժառանգված է մեր հիմնադիրներ Ռոստոմից եւ Զավարյանից, որը լավագույնս արտացոլված է նաեւ ՀՅԴ 1982 թ. ծրագրում: Ռոստոմը, 1907 թ. ՀՅԴ չորրորդ Ընդ. ժողովում, բացատրելով Դաշնակցության կատարած դերը որպես սոցիալիստական կուսակցություն, պարզաբանում էր, թե ինչպես կարելի է ոչ-ազգովին եւ միայն աշ-

խատավորների հասարակական բազայի վրա հենվելով պայքարել ամբողջ ազգի բարօրության համար: Իսկ Զավարյանը, նույն տեսակետի հիման վրա, արծարծում էր այն միտքը, որ Դաշնակցությունը հայ աշխատավոր դասակարգի շահերը պաշտպանելու դիրքից պիտի բարձրանա հայ ազգի բովանդակ շահերի պաշտպանության դիրքերը:

«Ազգի բովանդակ շահերի» եւ ոչ հասարակական որոշակի շերտի կամ դասակարգի շահերի պաշտպանության կեցվածքը, որ բխում է նշյալ գաղափարական խորքային համոզումներից ու նաեւ սահմանազատում է բուն ընկերվարական միտքը մարքս-լենինյան համայնավարական տեսակից (կոմունիստական դպրոցում կուսակցությունը համարվում է զուտ դասակարգային կատեգորիա), նույնպես որդեգրել են բազմաթիվ սոցիալիստական եւ սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ: Այդ իմաստով հատկանշական է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության 1959 թվականին գումարած Բադ-Գուդսբերգի Ընդհանուր ժողովը, ուր կուսակցությունը ինքն իրեն ձերբազատելով մարքսյան մի շարք անձուկ ֆրազամոլություններից եւ դոգմաներից, ի շարս այլոց, հանգեց այն համոզման, որ կուսակցությունն այլեւս չի ներկայացնելու սոսկ Գերմանիայի բանվոր դասակարգի շահերը, այլ ձգտելու է պաշտպանել գերման ազգի բովանդակ շահերը:

Այս առումով, ահա թե ծրագրի «Մուտք»-ն ինչպես է ներկայացնում ՀՅԴ-ն. «*Հայ Յեղափոխական Դաշնակցությունը իր բոլոր ուժերով պայքարում է հայ ազգի քաղաքական-տնտեսական, ընկերային-մշակութային բովանդակ շահերի պաշտպանության համար*»:

Այսօր գրեթե բոլոր սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լեյբորիստական կուսակցությունները հանդես են գալիս որպես իրենց ազգի բովանդակ շահերի պաշտպան: Օրինակ, Հունաստանի համահունական (Պանհելլենիկ) սոցիալիստական շարժումն իր 2008 թ. «Շարժման ուխտ»-ում իր առջեւ խնդիր է դնում «*ապահովել ազգային համաձայնություն՝ ազգային շահերը պաշտպանելու համար*»[1]:

Այնուամենայնիվ կան նաեւ ոմանք, որոնք դեռ իրենց համարում են նախ բանվոր դասակարգի կուսակցություն: Այդ շարքին է պատկանում Իսպանական սոցիալիստական բանվորական կուսակցությունը, որի 2005 թ. ծրագրում ամրագրված է. «*Իսպանական սոցիալիստական բանվորական կուսակցությունը, ավելի քան 125-ամյա իր պատմությամբ, բանվոր դասակարգի ու նաեւ այն տղամարդկանց ու կանանց քաղաքական կազմակերպությունն է, որքեր պայքարում են շահագործման բոլոր ձեւերի դեմ եւ օժանդակում հասարակության անցմանը դեպի ազատություն, հավասարություն, համերաշխություն եւ խաղաղություն, եւ մարտնչում հանուն ժողովրդի առաջադիմության*»[2]: Նույնիսկ այս դեպքում էլ, ինչպես երեւում է, իսպանացի սոցիալիստները իրենց սոցիալիստական հենարանի համար նկատի են առել շատ առաձգական շրջագիծ:

* * *

Այնուհետեւ «Մուտք»-ը ներկայացնում է Դաշնակցության գաղափարական պատկերացումը հայ ազգային-ազատագրական պայքարի մասին. «*Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը հիմնավորում է իր գաղափարաբանությամբ: Նա առաջադրում է անհատի ազատության, ազգային ինքնորոշման եւ անկախ պետականության, ընկերու-*

թյան համերաշխության եւ բարօրության ճանապարհով հայ մարդու եւ հայ ազգի անկաշկանդ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացման ապահովումը»: Նմանատիպ հաստատման ենք հանդիպում բուլղարական սոցիալիստների ծրագրում. *«Բուլղարական սոցիալիստական կուսակցու-թյունը խորհրդարանական եւ զանգվածային կուսակցություն է եւ ձգտում է, համաշխարհային, ազգային եւ սոցիալիստական արժեքների հիման վրա, ստեղծել մարդկային եւ ժողովրդավարական հասարակություն»*[3]: Բուլղարացի սոցիալիստների արժեքային համակարգում էլ ազգայինը եւ սոցիալիստականը ներկայացվում են որպես մեկ ամբողջություն:

Այս ընկալումը, այսինքն ազգային ինքնորոշման, հասարակական բարօրության եւ արդարության գուգահեռության սկզբունքը նույնպես խոր եւ պատմական արմատներ ունի դաշնակցական արժեքային համակարգում: Ինչպես յուրաքանչյուր ազգային շարժում ունի հասարակական պատճառներ ու արմատներ, այնպես էլ, փոխադարձաբար, ամեն հասարակական շարժում իր խորքում ազդված է ազգային նկարագրի առանձնահատկություններից: Այսպիսով, մեկի ազատագրությունը առանց մյուսի վաղանցիկ է եւ թերի: Սա դիպուկ բնորոշել է Գարեգին Խաժակը. *«Որքան մի ազգի մեջ սոցիալիստական շարժումը նոր է, այնքան ստրկորեն են փոխառնված կուսակցությունների ծրագրերը, նույնքան կապկորեն են ընդօրինակված մեթոդները, տակտիկան եւ այլն»*[4]: Իսկ հակառակ դեպքում, ըստ նրա, երբ ավելի փորձված ու ինքնուրույն են լինում հասարակական շարժումները, այնքան ավելի *«ընդունում են տեղական կամ ազգային բնույթ...»*[5]:

ՀՅԴ ծրագրում ազգային ազատագրական պայքարների եւ հասարակական շարժումների զուգահեռության սկզբունքը, որին դեռ կանդրադառնանք, որդեգրվել է գրեթե բոլոր այն ազգերի սոցիալիստական ուժերի կողմից, որոնք ազգային ազատագրական դատ են ունեցել կամ դեռ ունեն: Ավելին. այս սկզբունքը տեսականորեն որդեգրվել է նաեւ այն ուրույն սոցիալիստական ուժերի կողմից, որոնց ազգերը ազգային հարց չեն ունեցել վերջին մի քանի դարերի ընթացքում: Ասվածի լավագույն օրինակն է Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որի 1993 թ. ծրագրում արծարծվել է զուգահեռության սկզբունքը. *«Ազգերի ազատագրական պայքարին մշտապես ուղեկցել է հասարակական եւ տնտեսական փրկության գաղափարը»*[6]: Ազգային ազատագրական պայքարների նկատմամբ սոցիալիստական մտքի զորակցությունը բոլորովին էլ պատահականություն չէ, այլ ակունք է առնում զուգահեռության նշյալ սկզբունքից:

Ահա այս ընդհանուր հենքի վրա ՀՅԴ ծրագրի «Մուտք»-ը, առանց մանրամասնելու, ընդհանրական բնութագրումներ է տալիս Դաշնակցության հետապնդած նպատակների մասին. *«Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ձգտում է հայ դատի լուծմանը, ամբողջական հայությամբ ամբողջական հայրենիքի կերտմանը»*:

(Շարունակելի)

---

1 Հունաստանի համահունական (Panhellenic) սոցիալիստական շարժում, PASOK, Շարժման ուխտ, 2008:

2 Իսպանական սոցիալիստական բանվորական կուսակցություն, Ծրագիր, 2005 թ.:

3 Բուլղարական սոցիալիստական կուսակցություն, Ծրագիր, 2006:

4 Խաժակ Գ., Ինչ է ազգությունը, Բեյրութ, 1974, էջ 247:

5 Նույն տեղում:

6 Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, Ծրագիր, 1993:

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐԾԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարիամ Կիրակոսյան

Համաշխարհայնացման այս դարաշրջանում, ինչպես հայտնի է, երիտասարդությանն ապաքաղաքականացնելու աշխատանքը տարվում է ավելի զանգվածաբար, քան երբևէ: Այս գործընթացի հետևանքով Հայաստանում խիստ ավելացել է սեփական պատմության, մշակույթի հանդեպ անտարբեր երիտասարդների թիվը: Ուստի մեր պատմության արժանահիշատակ դրվագների հետևողական ուսուցումը մատաղ սերնդի շրջանում պետք է լինի հակակշիռ վերոհիշյալ քաղաքականության նկատմամբ: Կիսա-պատերազմական իրավիճակում գտնվող մի երկրի համար, ինչպիսին է Հայաստանը, երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունը առավել ևս կարևորություն է ներկայացնում ազգային անվտանգության տեսակետից:

Հայոց պատմության ուսուցողական ծրագրում առանձնահատուկ տեղ պետք է գրավի 19-րդ դ. վերջի - 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարը՝ հետևյալ պատճառներով.

1. Տվյալ ժամանակաշրջանի (նաև 20-րդ դ. վերջի Արցախյան) գոյապայքարը բնորոշվում է բռնապետական լծի տակ տառապող ժողովրդի ազգային զարթոնքով: Այսօր

ևս, չնայած ունենք անկախ պետականություն, դատապարտվածի հոգեբանությունն առկա է հասարակության լայն շերտերում:

2. Այդ դրվագները վերցված են մեր ոչ վաղ անցյալի պատմությունից, գիտական փաստերը դրանց վերաբերյալ ավելի շատ են, ավելի ճշգրիտ, ու այս թեմայով շարադրանքն ընթերցողի համար կարող է ավելի համոզիչ լինել:

3. 19-րդ դ. վերջն ու 20-րդ դ. սկիզբն ընդգրկող ժամանակահատվածը մեզ համար ինքնին կարևորագույն ու անկյունաքարային մի շրջան է, հետևաբար պետք է ուսումնասիրվի իր բոլոր իրադարձություններով:

4. Տասնամյակներ շարունակ խորհրդային պատմագրությունը խեղաթյուրել է հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունը՝ նսեմացնելով նրա իսկական նշանակությունը մեր ժողովրդի կյանքում, ուստի ազատագրական շարժման կատարած իրական դերը ցույց տալու գործում անհրաժեշտ են սկզբունքային ու անաչառ մեկնաբանություններ:

Այսպիսով, չնայած վերոհիշյալ բոլոր հանգամանքներին, 1) 19-րդ դ. վերջի ազգային-ազատագրական պայքարը ՀՀ կրթական հաստատություններում ուսուցանվում է ոչ բավարար մակարդակով, 2) ոչ հազվադեպ շեշտը դրվում է շարժման մեջ այնքան էլ էական դեր չխաղացած իրադարձությունների վրա: Այս ամենի հետևանքով ազատագրական պայքարի հիշարժան շատ դրվագներ մնում են ստվերում: Այդ դրվագներից է Խանասորի արշավանքը, որի առանձնահատուկ դերը ազատագրական պայքարի մեջ պայմանավորված է նրանով, որ արշավանքը «առաջին կազմակերպուած մեծածաւալ յեղափոխական ձեռնարկը... առաջին խոշոր ու յաջող մարտական գործն էր, որ տեղի էր ունենում հայրենի հողի վրայ, այն էլ յաղթական վախճանով»[1]:

Խանասորի արշավանքը տեղի է ունեցել 1897 թ. հուլիսի 24-25-ին: 1894-1896 թթ. համիդյան ջարդերից ու ինքնապաշտպանական մարտերի, հատկապես Վանի 1896 թ. ինքնապաշտպանության ձախողումից հետո հրամայական էր դառնում մեծամասշտաբ պատժիչ գործողության իրականացումը: Ազգային-ազատագրական շարժման գլխավոր կազմակերպիչ ուժ հանդիսացող Հայ Յեղափոխական Դաշնակցության հետագա գործունեության առանցքը ճշտելու նպատակով 1896 թ. դեկտեմբերի 27-ին մեկնարկում է ՀՅԴ «ընդհանուր» շրջանային ժողովը:

Ժողովը միաձայն մերժում է խաղաղ նախապատրաստումը՝ այն համարելով անընդունելի ու նույնիսկ անհնարին: Միաժամանակ մերժվում է գործունեությունը բուն Երկրում դադարեցնելու և ուժերը Թուրքիայի եվրոպական մասում կենտրոնացնելու առաջարկը՝ հիմնավորելով. «Ճիշդ է, Կռուածաղիկը (Կ. Պոլիսը - Մ. Կ.) եւ եւրոպական Տաճկաստանը մեր հարցի վերաբերմամբ մեծ նշանակութիւն ունին, սակայն, բուն Երկիրը պիտի ցոյց տայ իր անորմալ վիճակը, անտանելի կեանքը, ժողովուրդը ինքը պիտի արտայայտի իր կենսունակութիւնը, ինքնուրոյն ապրելու ընդունակութեան յատկանիշները, որպէսզի եւրոպան էլ ստիպուած լինի կատարելու *ժողովրդի պահանջները*»[2]:

Ապագա գործունեության մարտավարության վերաբերյալ ժողովը, ի շարս այլ որոշումների, ընդունում է. «Վրէժստանում (Ատրպատականում- Մ. Կ.) պատրաստի ոյժ (զէնք եւ մարդիկ) պահել եւ յարմար դէպքում մեծ արշաւանք գործել սահմանից»[3]: Այս որոշման հիման վրա էլ հետագայում կազմակերպվում է Խանասորի արշավանքը: Ի դեպ, նմանատիպ արշավանք ծրագրված էր կատարել դեռևս 1896 թ.: «Պարսկաստանի սահմանի վրայ... արդէն պատրաստութեան մէջ էր արշաւախումբը դէպի Վասպուրական»[4]: Բայց արշավանքը այդ ժամանակ հնարավոր չի լինում իրականացնել ու հետաձգվում է հաջորդ տարվան:

1897 թ. փետրվարի 8-ին արշավանքի նախաձեռնության հեղինակ, հայ ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչ Նիկոլ Դումանը ՀՅԴ Թավրիզի «Վրեժ» կենտրոնական կոմիտեին տեղեկացնում է արշավանք կազմակերպելու որոշման մասին: Միաժամանակ նշվում է. «Որոշուած է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Խելօքի (Րաֆֆու «Խենթը» վեպի հերոս Սամսոն Տեր-Պողոսյանի- Մ. Կ.) հետ...Տեսնենք կը կատարի՞ իր խոստումը»[5]: Այսպիսով, Խենթի հետ բանակցություններ են տարվել արշավանքին մասնակցելու նպատակով, սակայն

վերջինս չի ցանկացել մասնակցել: Չնայած որոշ վերլուծաբաններ Խանասորի արշավանքին Խենքի չմասնակցելու փաստը համարում են տեխնիկական պատահականություն:

Մարտի 5-ին Քրիստափոր Միքայելյանը Նիկոլ Դումանին ուղղված նամակում գրում է արշավանքն իրագործելու՝ ՀՅԴ Բյուրոյի պատրաստությունների մասին. «Մենք արդէն զբաղուում ենք արշաւանքի խնդրով... բայց մեզ պակասում է ամենագլխաւորը - մի համերաշխ մարմին այդտեղ»[6]: Փաստորեն արշավանքի վճռի հետևանքով առաջ էին եկել տարաձայնություններ: Տեղական գործիչների մեծ մասն ու Վասպուրականի կոմիտեն դեմ էին այդ վճռին՝ գերադասելով մեծ արշավանք կազմակերպելու փոխարեն Ատրպատականում հավաքված ուժերը հայդուկային խմբերով կենտրոնացնել Վասպուրականում: Արշավանքի կողմնակիցները՝ Նիկոլ Դումանը, Քրիստափոր Օհանյանը և ուրիշներ, հիմնավորում էին, որ հայ ազատագրական շարժման համար զուտ ինքնապաշտպանական կռիվներն արդեն անցած փուլ են, 1890-ական թթ. համիդյան ջարդերից հետո պետք է դիմել ակտիվ հարձակողական գործողությունների:

Եվ իրոք, հետադարձ հայացք ձգելով, տեսնում ենք, որ ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու համար այդ ժամանակ անհրաժեշտ էր ազատագրական պայքարում իր նախադեպը չունեցող խոշոր ձեռնարկ: Բացի այդ, դրված էր եվրոպական երկրների ուշադրությունը հայկական հարցի վրա բևեռելու խնդիր, իսկ հայդուկային մանր գործողություններով դա հազիվ թե հնարավոր լիներ:

Վերոհիշյալ հակասությունների պայմաններում էլ հունիսի 8-ին կայանում է ՀՅԴ Սալմաստի կոմիտեի նիստը, որում Նիկոլ Դումանը սկզբունքային դիրքորոշում է հայտնում՝ հօգուտ արշավանքի իրականացման: Նիստը եզրակացնում է. «Որովհետեւ կոմիտետիս կէսը համաձայն է արշաւանքին եւ իր ետեւում ունի Ընդհանուր ժողովի (ՀՅԴ 1896-1897 թթ. շրջանային ժողովի - Մ. Կ.) որոշումն, որոշուեց կատարել արշաւանքը, չնայած որ կոմիտետիս միւս մասը հակառակ է այդ մտքին»[7]:

Սակայն այս նիստից հետո էլ տարաձայնությունները չեն վերանում, այլ ավելի շատանում են: Այդ հակասությունները հարթելու նպատակով 1897 թ. հուլիսի սկզբին ՀՅԴ Բյուրոն, որպես ներկայացուցիչ, Սալմաստ է ուղարկում Հարություն Շահրիկյանին: Հուլիսի 6-ին վերջինիս մասնակցությամբ տեղի է ունենում «մի խառն ժողով», որում որոշում է ընդունվում արշավանքի անհապաղ իրականացման վերաբերյալ[8]: Միևնույն ժամանակ Վասպուրականի կոմիտեն պահանջել էր 60 զինված հայդուկ ուղարկել Երկիր[9]: Ժողովը գոհացում է տալիս այդ պահանջին, թեև Վազգենի գլխավորությամբ Վան է ուղարկվում պահանջվածից ավելի փոքր խումբ:

Նիկոլ Դուման

Քրիստափոր Օհանյան

Շահրիկյանը վճռում է նաև արշավանքի հրամանատարական կազմի հարցը: Հրամանատար է ընտրվում Վարդանը, փոխհրամանատար՝ Իշխանը: Հարյուրապետներ են դառնում Շատախցի

Փոխիկն ու Մոկացի Ախպերը: Հեծելազորի հրամանատարն էր Սևքարեցի Սաքոն: Արշավանքի գլխավոր կազմակերպիչ Նիկոլ Դումանն ընտրվում է հիսնապետ, չնայած, ինչպես նշում է Ռուբենը. «Ան էր միակ արժանաւորը ղեկավար լինելու արշաւանքին, կամ առնուազն լինելու ղեկավարի օգնական»[10]:

Այսպիսով, Բյուրոյի ներկայացուցիչը, պահանջելով արշավանքի իրականացումը, հրամանատարի ու փոխհրամանատարի պաշտոններում գերադասում է տեսնել Վարդանին ու Իշխանին, ովքեր ի սկզբանե արշավանքին դեմ են եղել: Բայց եթե փորձենք այս քայլը մեկնաբանել փոքր-ինչ այլ տեսանկյունից, կտեսնենք, որ այն յուրօրինակ փոխզիջում էր, որը հետապնդում էր կողմերին հաշտեցնելու նպատակ: Իսկ հարյուրապետների պաշտոններում թուրքահայ ֆիդայիների ընտրելու նպատակն էր արևելահայ-արևմտահայ խնդրի ավելորդ շահարկումից խուսափելը: Փաստորեն Շահրիկյանին հաջողվում է վերացնել տիրող տարաձայնությունները:

Հայ ազատագրական պայքարի գործիչները ոգևորությամբ են պատրաստվել այս ձեռնարկին: «Արշաւանքի լուրը տարածելով, ամեն կողմէ խումբ-խումբ կուգան կամաւորներ»[11]: Խանասորի արշավանքի մասնակիցների թվի վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ կան տարբեր տվյալներ: Ամենավստահելին, թերևս, արշավանքի գլխավոր զինագործ Գալուստ Ալոյանի կողմից 1900 թ. կազմված՝ Խանասորի արշավանքի մասնակիցների ցանկն է, որից հետևում է, որ արշավախումբը կազմված է եղել 253 հոգուց[12]:

Արշավանքի կազմակերպիչների առջև դրված էր Օսմանյան կայսրության՝ Պարսկաստանի հետ սահմանի մերձակայքում բնակվող քրդական հրոսակախմբերին պատժելու խնդիր: Այդպիսին պետք է լիներ Պարսկաստանի սահմանամերձ Խանասորի դաշտում (պատմական Վասպուրականի տարածք) բնակություն հաստատած քուրդ մազրիկ ցեղը, որը գլխավորում էր Շարաֆ բեկը: Այդ ցեղն էր Վանի 1896 թ. ինքնապաշտպանության ձախողումից հետո Սբ. Բարդուղիմեոս վանքի մոտ կոտորել դեպի Պարսկաստան նահանջող 800 հայերի: Այդ ցեղն էր իրականացրել Բաշկալայի հայության ջարդերը: Այժմ եկել էր հատուցման ժամը:

1897 թ. հուլիսի 24-ին, երդում տալուց հետո, արշավախումբը դուրս է գալիս Սալմաստից ու շարժվում դեպի թուրք-պարսկական սահման: Ուշ երեկոյան հատելով սահմանը՝ ֆիդայիները բարձրանում են Արաուլ լեռան արևելյան լանջը, որտեղից ուսումնասիրում են Խանասորի դաշտն ու հակառակորդի ուժերի դասավորությունը: Մազրիկցիներն ունեցել են մոտ 250 վրան, որոնցից մեջտեղի 3 սպիտակ վրանները պատկանել են ցեղապետ Շարաֆ բեկին: Փաստորեն, թշնամին ունեցել է մեր մարտիկների քանակով վրաններ, հետևաբար նրա ուժերը մի քանի անգամ

շատ են եղել: Այնուամենայնիվ, լեռան լանջից իջնելով Խանասորի դաշտ, արշավախումբը շրջապատում է մազրիկցիների վրաններն ու հուլիսի 25-ի լուսաբացին կայծակնային հարձակում գործում թշնամու վրա՝ հսկայական կորուստ պատճառելով հանկարծակիի եկած հակառակորդին: Շրապ բեկը փախուստի է դիմում կնոջ հագուստով: Հուլիսի 25-ին մազրիկցիներին 2000-անոց զորքով օգնության են հասնում քրդական հարևան ցեղերը, բայց մեր արշավախումբը կարողանում է դիմակայել նրանց ու գրեթե անկորուստ վերադառնալ Պարսկաստան: Խանասորում ընկած 19 հայ քաջերի անունները հիշատակված են «Դրօշակի» 1897 թ. No 11-ի մեջ: Հետագայում այդ ցուցակին ձեռագրով ավելացվել է 20-րդի անունը՝ Մկրտիչ Սուլթանյան: Խանասորի 20 նահատակների թվում էր Կարոն՝ ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմի եղբայրը: Հաջողվում է պահպանել նաև զինամթերքի մեծ մասը: Այսպիսով, Խանասորում հայ ուժերը քրդական ավազակախմբերի դեմ տարել են ռազմական խոշոր հաղթանակ: Բայց արշավանքը նաև բարոյական մեծ հաղթանակ էր:

Խանասորի արշավանքը առանձնահատուկ նշանակություն ունեցավ հայության մարտական ոգին բարձրացնելու գործում: Այն համիդյան ջարդերի արդյունքում ինչ-որ տեղ հուսալքված ժողովրդին հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ: Հետագայում կազմակերպված ֆիդայական շատ գործողությունների հաջողությունը մեծապես պայմանավորված է այս արշավանքի հաղթանակով:

Խանասորի արշավանքին մասնակցել են ֆիդայիներ Հայաստանի բոլոր անկյուններից ու հայաբնակ ամենատարբեր վայրերից: Ուստի Խանասորի շնորհիվ հայ ժողովրդի հատվածների միջև միասնությունն ավելի է ամրապնդվել, ինչը փայլուն կերպով դրսևորվել է 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվներում:

Հայ ֆիդայիների մարտական ուժն իր ազդեցությունն է ունենում նաև քուրդ հրոսակների վրա: «Դաշնակցութիւնը այսուհետեւ կը պատկերանար անոնց որպէս մի պետութիւն որ... ունէր պահանջներ, որոնք արդար էին եւ որոնք օր մը կրնային իրականանալ»[13]: Ուստի «97 թուականէն յետոյ քիւրտերու յարաբերութիւնները դէպի ֆետայիները ոչ թէ վատացան, այլ դէպի բարեկամութիւն կամ չէզոքութիւն թեքուեցան»[14]:

Իր զոհված հայրենակիցների վրեժը թշնամուց առնող ֆիդային այնուամենայնիվ ձեռք չէր տալիս կանանց ու երեխաներին: Ի դեպ, այս մեծահոգությունն իր արտացոլումն է գտել Խանասորին նվիրված հեղափոխական հայտնի երգում[15]:

Խանասորի արշավանքն իրեն արժանի լուսաբանումը չգտավ արտասահմանյան մամուլում: Սա պայմանավորված է ոչ թե արշավանքի թերություններով, այլ նրանով, որ այդ ժամանակ մեծ տերությունների ուշադրությունը բևեռված էր Կրետական հարցի վրա: Բայց և այնպես Խանասորի նման ուրույն ձեռնարկն իր անդրադարձը չէր կարող չունենալ: Խանասորի արշավանքին է նվիրված գերմանական «Die Zukunft» շաբաթաթերթում լույս տեսած «Հայոց մի յաղթութիւնը» հոդվածը, որի հեղինակը՝ գործողությունների ականատես գերմանացի ճանապարհորդ Հանս Ֆիշերը, մանրամասն ու մատչելի կերպով տալիս է արշավանքի նկարագրությունը[16]: Խանասորին են անդրադարձել նաև բրիտանական նշանավոր «Daily News»-ը, ռուսական «С.-Петербургскія Вѣдомости»-ն[17] և այլն: Ուշագրավ է, որ այս բոլոր անդրադարձների հեղինակների վրա հատկապես խոր տպավորություն են թողել 2 հանգամանք. 1-ինը հայերի կողմից կանանց ու երեխաներին խնայելու վերոհիշյալ փաստն է, 2-րդը՝ կազմակերպական կառույցն ու զինվորական կարգապահությունը: Ու սա նշողները եղել են բանակային հզոր ավանդույթներ ունեցող պետությունների քաղաքացիներ:

Խանասորում հայկական արշավախմբին քանիցս գերազանցող հակառակորդի նկատմամբ տարած հաջողությունը պայմանավորված է մի կողմից հայ մարտիկների նվիրվածությամբ ու անձնազոհությամբ. «Հայ ֆետային... ողջ չ'անցնիր երբեք թշնամիին ձեռքը: Ու ատկէ է որ մեր ռազմիկները՝ իրենց մօտ՝ մավզէր ու գրպանի ատրճանակ ունէին: Մավզէրը պատուհասելու համար թշնամին, ու ատրճանակը՝ անձնասպան ըլլալու համար վտանգի պահուն»[18], մյուս կողմից՝ կազմակերպական կուռ համակար-

գով: Արշավախումբն իր ստորաբաժանումներով՝ հետևակ, հեծելազոր, տասնյակներ, հիսնյակներ, հարյուրյակներ, ավելի շուտ բանակ է հիշեցրել: Փաստորեն նման ձեռնարկները, մանավանդ Խանասորի արշավանքը, անցումային փուլ են եղել հայդուկային խմբերից դեպի ազգային բանակ ընկած ճանապարհին:

Հայ ֆիդայիներից շատերի համար Խանասորը մարտական կնունք է եղել, մյուսներն այնտեղ ձեռք են բերել

մեծ փորձառություն: Արշավանքին են մասնակցել հայ ազատամարտի կարկառուն շատ դեմքեր, որ իրենց ավանդն են ունեցել ինչպես մեր հերոսամարտերում, այնպես էլ, 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, բանակաշինության գործում:

Խանասորի արշավանքը զուգահեռներ շատ ունի մեր ազգային-ազատագրական շարժման բազմաթիվ դրվագների, այդ թվում՝ Արցախյան հերոսամարտի հետ: Մոտ 15 տարի առաջ էլ թշնամին թերահավատորեն էր վերաբերվում կռվելու և հաղթելու մեր պատրաստակամությանը, բայց հանդիպելով մեր կազմակերպված ուժին՝ ստիպված էր վերանայելու իր վերաբերմունքը Հայաստանի ու հայերի նկատմամբ...

Այսպիսով, նպատակահարմար է, որ Խանասորի արշավանքը, որպես հայ ազատագրական պայքարի ինքնատիպ դրվագ, տեղ գտնի ՀՀ հանրակրթական դպրոցի հայոց պատմության ծրագրում, իսկ բուհերում ուսուցանվի

---

1 Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան, հատոր 2, էջ 48:
2 Ն. տ., էջ 338:
3 Ն. տ., էջ 340:
4 Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950), էջ 282:
5 Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան, հատոր 2, էջ 366:
6 Ն. տ., էջ 391:
7 Ն. տ., էջ 61:
8 Տես Ն. տ., էջ 63:
9 Տես Միքայէլ Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 151:
10 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր 2, էջ 41:
11 Միքայէլ Վարանդեան, նշվ. աշխ., էջ 152:
12 Տես Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան, հատոր 2, էջ 74-87:
13 Ռուբէն, նշվ. աշխ., հատոր 2, էջ 43-44:
14 Ն. տ., էջ 44:
15 Տես Դրօշակ, No 13, 1897:
16 Տես Ն. տ., No 14, 1897:
17 Նիկոլ-Դուման (գիծեր իր կեանքէն), էջ 7:

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 7 (195) XVIII ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հայաստանի վիճակը

Վանի դէպքերը

Թիւրք աղբիւրէ լուր կուտան, որ Վանի նահանգի իշխանութիւնները կասկածելի հայերի տները խուզարկելով՝ գտան ահագին քանակութիւնով զէնք և ռազմամթերք, մեքենաներ՝ փամփուշտներ պատրաստելու համար, ելեքտրական գործիքներ՝ ռումբերու պայթումը կանոնաւորելու համար, զէնքեր պատրաստելու նիւթեր, 5 կնիք, Դաշնակ յեղափոխական կոմիտէին վերաբերող գրքոյկներ և ուրիշ առարկաներ:

Անգլիացի երէցի մը տունը խուզարկելով, անգլ. Հիւպատոսի ներկայութեան, գտան 3 հրացան, 248 փամփուշտ և 4 սնդուկ դժոխային մեքենաներ պարունակող: Այս ամէնը կը պատկաներ երէցին ծառայութեան մէջ եղող հայու մը:

* * *

Վասպուրականը անգլիական պարլամենտում

Յուլիսի 14-ին անգլիական պարլամենտի 4 անդամներ- Օգրադի /սօցիալիստ/, Տրեվելեան, Լինչ /լիբերալներ/ և Լօ /իրլանդական կուսակցութիւնից/ - մին միւսի ետևից հարցումներ ուղղեցին արտաքին գործերի մինիստրին՝ Վասպուրականում կատարուած նոր բռնութիւնների առթիվ: Մինիստր Գրէյ պատասխանեց, որ հեռագրով պահանջած է Կ. Պոլսի բրիտանական դեսպանից՝ քննութիւն կատարել և պատժել տալ յանցաւորներին:

Մի քանի օր յետոյ պատգամաւոր Տրեվելեան նորէն հարց տուեց մինիստրին՝ արդեօք ստացե՞լ է նա տեղեկութիւններ դեսպանից: Սիր Գրէյ հաստատեց այն տեղեկութիւնները, որ տպուած էին Pro Armenia -

ի մէջ Խաչանում կատարուած խստութիւնների մասին: Մինիստրը յայտարարեց, որ Վանի անգլ. հիւպատոսի վկայութեամբ՝ տաճիկ զօրքը վատ չէ պահել իրեն վերջին անցքերի միջոցին, բայց որ րեդիդները վայրագութիւններ են գործել: Գրէյ նորէն շեշտեց, որ հրահանգւած է քննութիւն կատարել ու պատժել տալ յանցաւորներին :

* * *

Վասպուրական, 23 յունիս

Խաչանի սարսափներու մասին գրած էինք: Գիւղը ցրւած է: Գիւղի մեջ մնացած են կիներ ու պառաւներ միայն: Կառավարութիւնը կը փնտռէ փախստական 25 անձինք:

Թիմարի և Հայոց Ձորի մէջ կառավարութիւնը ձեռք ձգած է մեծաքանակ ռազմամթերք: Անօրինակ բռնութիւնով գիւղերէն կը հաւաքեն զէնքերը. Ինքնաբերաբար յանձնողներ շատ եղան: Դաւաճանները կը վխտան: Անկարելի է որոշել, որն է դաւաճանը և որը չէ:

Երկրի ամէն կողմ քիւրդ ճանպէզարներ ման կուգան և պատահած հայը կսպաննեն:

Ժողովրդի ամենամեծ թշնամին սովն է, սակայն: Սովը միացած սուրին, սուգ և աւերածութիւն կը սփռեն հայ աշխարհին մէջ:

Արամի և ընկերներու ձերբակալումը՝ հայ պուրժուազիայի դաւադրութիւնովը եղած է: Ձերբակալւածները այն աստիճան ծեծած են, որ Տաճատը ծեծի տակ մեռած է:

* * *

Խաչան, 2 յուլիս

Յունիսի 6-ին՝ գիշերով եկան զօրքերը գիւղը պաշարեցին, որ տևեց ամբողջ շաբաթ մը: Առաջին օրէն սկսան անխնայ կերպով կոտորել անմեղ ժողովուրդը: Ոչ մէկ տեղ պատմութեան մէջ, այսպիսի զարհուրելի չարչարանքներ չեն տեղի ունեցած: Զօրքերը տուներ մտնելով ամբողջովին կողոպտեցին ու քարուքանդ ըրին: Եկեղեցին կողոպտեցին: Հաճոյքներէն մէկն էր արանց և կանանց ձեռքերը բևեռելը:

Բարբարոսական այս արարքը պէտք չէ որ մոռցի պատմութեան մէջ:

* * *

Կայան և շրջակա գիւղերը

Կայանի ժողովուրդը ևս անխնայ կոտորեցին: 20 լիրա ստիպմամբ առած են: Որովհետև զէնք կը պահանջէին, խեղճ գիւղացիք 5 ժամ հեռու քիւրդ գիւղեր կ երթան, ծախու զէնք կ առնեն և կը բերեն կը յանձնեն: Կիներ իրենց մանուկները գրկերնին, լեռ ձոր թափառական ման կուգան: Մօտակայ գիւղերը ևս նոյն վիճակը ունին:

* * *

Մուշ, 15 յունիս

Անցեալ յունիս 10-ին, Բռնաշէն գաւառի և սասունցի քրդերէն խաբեութեամբ ու յանկարծ կը մտնեն Ս. Աղբերիկ վանքը: Ասոնք, որ վանքի հողերը, ջաղացքը, անտառը կը շահագործեն, նկատելով, որ վանահայր Զաքարիա վարդապետ միշտ կը բողոքէ իրենց դէմ, կորոշեն զայն սպաննել և կը յաջողին:

1898 ին նոյն կերպ չարաչար սպաննեցին նոյն վանքին մէջ վանահայր Ղազար վարդապետը և անպատիժ մնացին:

Բռնաշէնի մէջ քիւրդ ցեղեր անդարմանելի չարիքներ կը հասցնեն մօտկցի, խութեցի, բռնաշէնցի հայերը սպաննելով, թալանելով,

հալածելով և անոնց հողերը գրավելով: Հայ ժողովրդի 3/4-ը փախեր է այն կողմերէն՝ թողնելով իր հողերը, տները, ժամերը քրդերուն:

Ինչպէս Տարոնի նոյնպէս Սասունի մէջ սոսկալի հարկահաւաքութիւն կայ:

* * *

Սասունը.- 1904-ի ջարդերէն և կորուստներէն միայն մասով կարողացաւ վերականգնիլ այդ լեռնավայրը, ուր այլևս երբեմնի լեռնականները չեն մնացեր. հալածանքը բուռն է: Սասունի զանազան կէտերու վրայ զետեղուած զօրքերը կ ապականեն անոնց անայլայլ նկարագիրը և այդ սրբազան լեռներու նւիրականութիւնը: Շատեր քաղցէն հալածական, կը լքեն իրենց օճախները, կ իջնեն դաշտերը, միմիայն հաց գտնելու համար: Զօրքերը Տալւորիկի մէկ քանի թաղերու իրենց բոյներուն անբաժանելիօրէն կառչած ժողովուրդը կը հալածեն, կը քշեն իրենց տուներէն և կը կողոպտեն զանոնք:

* * *

Էրզրում, 10 յուլիս

Տէրսիմը դեռ ապստամբական վիճակի մէջ է: 32 վաշտ զօրքով պաշարած են: Շաբթւանս լուրերուն նայելով 150 զօրք և 4 սպայ սպանուած են: Հրաման եղած է բոլորովին բնաջինջ ընել Տէրսիմը: Տէրսիմը ճանչցող եւրոպացիի մը կարծիքը այն է, որ 100,000 զօրք պէտք է Տէրսիմը կարենալ զսպելու համար: Թիւրք կառավարութիւնը, ներկայ պայմանների մէջ, անհնար է որ յաջողի այդքան զօրք համախմբել:

15 յուլիս

Երեք օր առաջ Միլլի աշիրէթի պետ Իպրահիմ փաշան տեղս հասաւ 1000 ձիաւոր զօրքերով: Այժմ մեկնելու դիտաւորութիւն չունի, մինչև որ իր կարգ մը պահանջները չը գոհացւին: Պահանջները ինչ են յայտնի չէ:

15 յուլիս

Տէրսիմի քիւրդերուն վրայ ղրկւած զօրքերու մեծ մասը ապստամբներուն հետ միացած՝ կառավարութեան դէմ կը կռւին: Եկած զօրքերը Երզնկայի կողմերէն են:

* * *

Յանուն վայելչութեան

Չափը պահպանելու առաքինութիւնը տրւած չէ Կ. Պոլսի մեր հրապարակագիրներին: Ազատ մամուլի հրապարակումը առիթ եղաւ նրանց համար՝ ստրկամտութեան նոր և այլանդակ ցոյցեր անելու: Մի կողմից՝ ազատութեան ապաթեօզ, միւս կողմից սանձարձակ ներբողներ ազատութեան մեծագոյն դահճի հասցէին: Եւ այդ ներբողները այնքան խանդավառ են, այնքան զգացւած, որ դժւարանում էք հաւատալ, թէ նրանք կեղծ են: Վրդովեցուցիչ է: Դա փոլիթիկ չէ, այլ պարզապէս ստորաքարշութիւն: Աւելի կոպիտ վիրաւորանք անկարելի է հասցնել- այս մեր օրերում- հայ ժողովրդին և հարիւր հազարաւոր նահատակների յիշատակին: Ոչ ոք չի պահանջում այդ խմբագիրներից՝ ազատութեան օրերում արշաւանք սկսել Աբդիւլ Համիդի դէմ, բայց հօ կարելի էր -թէկուզ յանուն վայելչութեան - լռութեան տալ այդ չարաշուք անունը:





Ավո Գաբրճեան

Բառագիտություն և օտարաբանություն

Հալէպ, 2008 թ.,
160 էջ

Խոսակցական հայերենը (թե արևելահայերենը և թե արևմտահայերենը) խիստ ընկալունակ է օտար բառերի ու օտարաբանությունների հանդեպ: Մենք հաճախ, չտքնելով մտաբերել կամ ստեղծել դրանց համարժեքները, պարզապես տառադարձում ենք դրանք ու օգտագործում նույն հնչումով՝ մի որոշակի ժամանակ անց հայերենի «քաղաքացիություն» շնորհելով մեծ թվով օտար բառերի: Այս երևույթն, ինչպես ասացինք, հատուկ է թե արևելահայերենին և թե հատկապես արևմտահայերենին, որն առավել ենթակա է օտար ազդեցություններին: Հայրենիք-Սփյուռք կապերի վերջնական ազատականացմանը զուգընթաց, արդեն իսկ զգալի է հենց արևելահայերենի ազդեցությունը արևմտահայերենի վրա, որ դրսևորվում է հատկապես ռուսերենից մեզ անցած բառերի փոխանցմամբ: Այդ բառերի ու բառակապակցությունների արևելահայերեն տառադարձումները հաճախ դժվարըմբռնելի են Սփյուռքի մեր հայրենակիցների համար:

Այս և նման այլ կնճիռների վերացման նպատակ է հետապնդում Ավո Գաբրճյանի «Բառագիտություն և օտարաբանություն» աշխատասիրությունը, որն իր մեջ ներառում է ճիշտ հազար օտար բառ ու բառակապակցություն՝ իրենց բացատրություններով:

Թեև գրքույկը կազմված է բառարանագրության սկզբունքներով (բառերի այբբենական դասավորություն, մեկնաբանություններ, բառահոդվածներ), հեղինակն այն բառարան չի համարում: Ըստ նրա՝ սա ոչ թե բառարան է, այլ օտար բառերի մի փունջ, որ հայերենի գրական ու խոսակցական լեզվի մեջ գործածական է դարձել հայրենիքից մինչև Արևմուտք, Մերձավոր Արևելք և այլ հայկական գաղութներ:

Հեղինակը չի բավարարվել միայն օտար բառերի ու բառակապակցությունների իմաստն ու գործածական տարբերակները նշելով: Յուրաքանչյուր բառի դիմաց տրված են նրա բուն արմատի ծագումը, անհրաժեշտության դեպքում՝ արևելահայերեն ու արևմտահայերեն տարբերակները (ուղղագրության առումով), ինչպես նաև բազմիմաստ բառերի զանազան նշանակությունները: Ուստի ավելորդ չէ ընդգծել, որ, իր այս առանձնահատկությունների շնորհիվ, գրքույկը մի ուսանելի ձեռնարկ է մեր ժողովրդի երկու հատվածների ընթերցասերների համար:



Ռուբեն Գաբրիելյան

Ռուբեն Գաբրիելյանը արմատներով արցախցի նկարիչ է, երկար ճանապարհ անցած արվեստագետ: Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան գերազանցությամբ ավարտած երիտասարդ նկարիչը երկար տարիներ ապրեց ու աշխատեց ռուսական միջավայրում (ք. Չելյաբինսկ), որտեղ ստեղծեց տարբեր թեմաներով բազմաթիվ կտավներ, ցուցահանդեսներ բացեց, արժանացավ դրվատանքի, բայց աչքը միշտ հայրենի եզերքի կողմն էր:

Արցախյան շարժումը, արցախցու հոգևոր զարթոնքը նոր ու հզոր թևեր տվեց նաև Ռուբենի վրձնին: Արցախյան թեման Ռուբենի կտավներում նոր ոգի առած, նոր շարունակություն ունեցավ՝ շաղախված նոր գաղափարներով, նոր գույներով ու գեղագիտական նոր լուծումներով: Ռուբեն Գաբրիելյանի կտավների արցախյան շարքը (և ոչ միայն) հայրենիքին նվիրվելու, հանուն նրա կյանքը զոհաբերելու և հավերժանալու խորհուրդ ունի...

Լիպարիտ Սարգսյան



«ԴՐՕՇԱԿ»-Ի ՊԱՏԿԵՐԱՍԱՐԱՀ